

ԱԶԱՏ-ՈՐՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ  
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԵՒ  
ՊՈԼՍՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԷՐ» ՕԹԵԱԿԸ  
ԺԹ. ԴԱՐՈՒՆ

ԱՐԹԻՒՐ ՊԵՅԼԷՐԵԱՆ

Մեր այս ուսումնասիրութիւնը կը վերաբերի ԺԸ. դարուն Անգլիոյ մէջ ծագում առած ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաք Պոլիս մուտքի փորձերուն, օսմանահպատակ փոքրամասնութիւններուն մօտ անոր գտած ընդունելութեան եւ պոլսահայ համայնքի անդամներուն կողմէ 1808ին հայկական Մէր օթեակի հիմնումին: Մէր օթեակը իր գործունէութիւնը մինչեւ 1890ականները ընդհատումներով շարունակելէ յետոյ, Հայկական Հարցի հետզհետէ զարգացող դէպքերուն պատճառաւ ի վերջոյ, 1898ին, յաւէտ փակուեցաւ:

Սոյն նիւթին շուրջ քանի մը ուսումնասիրութիւններ թէեւ նախապէս լոյս տեսած են<sup>1</sup>, այսուհանդերձ մեր կատարած արխիւային ընդարձակ պրպտումները մեզ աւելի ճշգրիտ եւ հիմնական եզրակացութիւններու առաջնորդեցին:

\* \* \*

Ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան սկզբունքն է «Աստուծոյ գոյութեան, հոգիի անմահութեան եւ մարդկային համերաշխութեան հաւատալ եւ տիեզերքի յառաջդիմութիւնը ապահովելու համար մարդկային բարօրութեան ու հոգիի ազնութեան ծառայող գիտութեան եւ արուեստի տարածումին հետամուտ ըլլալ»<sup>2</sup>: Ազատ-որմնադրութիւնը միջազգային կազմակերպութիւն մըն է, որուն անդամները առանց կրօնի կամ դաւանանքի խտրութեան եւ առանց քաղաքական համոզումներու տարբերութեան, իրարու հետ ամենազօրաւոր կապերով միացած կ'ըլլան: Այս պատճառաւ իսկ, ազատ-որմնադիրներու օթեակներուն մէջ ժողովներու ընթացքին թոյլատրուած չէ քաղաքական հարցեր ծեծել կամ կրօնական խնդիրներու շուրջ վիճիլ<sup>3</sup>:

Ազատ-որմնադրութեան առաջին օթեակը հիմնուած է Լոնտոնի մէջ, 1717 Յունիսին՝ Անգլիոյ Ճորճ Ա. Թագաւորի (1714-27) գահակալութեան օրով: Սոյն գաղափարաբանութիւնը անգլիացի վաճառա-

կաններու միջոցաւ շուտով մեծ հետաքրքրութիւն ստեղծեց ու հետեւորդներ գտաւ Ֆրանսայի (1725ի շուրջ), Սպանիոյ (1727ին) եւ Գերմանիոյ (1737ին) մէջ:

Անգլիոյ *Մեծ Օթեակի* (Grand Lodge) պաշտօնաթերթը ազատ-որմնադրութեան յարող անձերը երեք խումբի կը բաժնէ: Առաջին՝ անոնք, որոնք հետաքրքրութեան համար կը մտնեն, իրենց ճամբան չեն գտներ եւ ոչ ալ հասկցած կ'ըլլան: Ասոնք իրական ազատ-որմնադիր չեն եղած եւ իրենց համար արարողութիւնները ոչինչ կը նշանակեն: Երկրորդ խումբին մաս կազմող ազատ-որմնադիրները ընկերութեան վրայ բեռ մըն են: Անոնք ճանաչում եւ օգուտ կը սպասեն, բայց կը մերժեն ծառայել: Մինչդեռ վերջին խումբին մաս կազմողները իրենց կարելին կ'ընեն յառաջդիմութեան համար, եւ առանց անոնց ջանքին, ազատ-որմնադրութիւնը շատոնց անկուճի ենթարկուած, անցեալի եռանկիւն բուրգերուն նման թաղուած պիտի ըլլար:

Ազատ-որմնադրութիւնը՝ Եւրոպայի մէջ մեծ ընդունելութեան արժանանալէ ետք, հետզհետէ սկսաւ հետեւորդներ գտնել նաեւ Օսմանեան Կայսրութեան մէջ: Ըստ Լոնտոնի *Մէնթ Ճէյմզ 'զ Իվնինկ Փոսթ* (St. James's Evening Post) թերթին մէջ, Մայիս 1738ին լոյս տեսած Պոլսէն ուղարկուած նամակի մը, «Հալէպի եւ Ջմիւռնիոյ մէջ - եւ նոյնիսկ Պոլսէն առաջ - ազատ-որմնադիրները յաջորդաբար օթեակներ կը հիմնեն ուր թուրք բարձրաստիճան պաշտօնատարներ կ'ընծայուին»: Իսկ 1748ի վերջերը Պոլսոյ մէջ քանի մը վաճառական անգլիացիներու կողմէ ազատ-որմնադիրներու ժողովներ կը սկսին տեղի ունենալ, որոնց նոյնիսկ տեղացի ոչ-խալամ հասարակութենէն ալ անդամներ կը մասնակցին:

Այսուհանդերձ, Օսմանեան Կայսրութեան նման իսլամական օրէնսդրութեան՝ շարիայի աստուածապետական սկզբունքներով կառավարուող բազմազգեայ եւ բազմակրօն երկրի մը մէջ, ուր «անհաւատ» Եւրոպայէն ներածուած ամէն գաղափարաբանութիւն, պետութեան եւ մահմետական ժողովուրդի մեծամասնութեան կողմէ կասկածանքով կը դիմաւորուէր եւ ընդդիմութեան կը բախէր, դեռ շատ կանուխ էր յուսալ որ ազատ-որմնադիրները հոն եւս պիտի կարենային ազատ-համարձակ գործունէութիւն ցոյց տալ, գաղտնի ժողովներ գումարել, հաւաքոյթներ կազմակերպել, ուր ոչ-անդամ (profane) մը պիտի չկարենար ներկայ գտնուիլ: Արդարեւ, յանուն մահմետական կրօնքի տարածման՝ Արեւմուտքի «անհաւատ» տէրութիւններու դէմ յարատեւօրէն «Սուրբ Պատերազմ» մղող Օսմանեան Տէրութիւնը ինչպէ՞ս կրնար իր յօժար կամքով ազատ-որմնադիրներու

քարոզած տիեզերքի ժողովուրդներու եղբայրութեան եւ հաւասարութեան սկզբունքները եւ գաղափարաբանութիւնը լաւ աչքով դիտել եւ թոյլատրել անոնց գործունէութիւնը, երբ իսլամական կրօնքին հիմը իր մահմետական եւ ոչ-մահմետական հպատակներուն օրէնքի առջեւ անհաւասարութիւնն է: Հետեւաբար, երբ ազատ-որմնադրութիւնը հետզհետէ հետեւորդներ կը գտնէր Պոլսոյ մէջ, վերոյիշեալ առաջին օթեակը օսմանեան իշխանութիւններու խիստ հակազդեցութեան հանդիպեցաւ: Գործադիր իշխանութեան նստավայրը՝ Բարձր Դուռը անմիջապէս միջոցներ ձեռք առաւ այդ շարժումը սաղմին մէջ խեղդելու համար:

Այդ թուականներուն, Պոլսոյ մէջ Ֆրանսայի դեսպան Կոմս Ռոլան տէ Գ'Ալլէօր (Comte Roland Des Alleurs), 24 Նոյեմբեր 1748 թուակիր նամակով մը ծովային նախարար Ժան Ֆրետերիք Մորըփայի (Comte Jean-Frédéric Maurepas) կը տեղեկացնէ, թէ «բազմաթիւ անգլիացի վաճառականներ ջանք կը թափեն Ֆրանսացի առեւտրականներ եւս այդ ընկերութեան մասնակից դարձնել, եւ կը կարծեմ յաջողած ալ են»<sup>8</sup>: Ըստ սոյն տեղեկագրին, նախաձեռնողները՝ յարմար հաւաքավայր չունենալով, «ժողովները Անգլիոյ Պոլսոյ դեսպանատան թարգմանին բնակարանը կը կատարեն»<sup>9</sup>:

Վստահաբար Բ. Դուռը նուազ պիտի մտահոգուէր, եթէ ազատ-որմնադիրներու Պոլսոյ մէջ գործունէութիւնը սահմանափակ համայնք մը ներկայացնող օտարներու չրջանակի մը մէջ միայն արձագանգ գտած ըլլար: Բայց այդպէս չեղաւ, եւ եւրոպացիներու հետ առեւտրական, մշակութային եւ կրօնական սերտ կապեր ունեցող Պոլսոյ յոյն եւ հայ համայնքներու պատկանող անդամներ, «ոմանք սնապարծութեան, ուրիշներ՝ հետաքրքրութեան համար ազատ-որմնադիրներու գործունէութեան հանդէպ համակրանք ցոյց տուին ու անոնց ժողովներուն մասնակցիլ սկսան»<sup>10</sup>, ինչպէս կը մեկնաբանէ ժամանակակից Ֆրանսացի հեղինակ մը:

Այս պարագան անշուշտ չուշացաւ նաեւ Պոլսոյ ոչ-իսլամ համայնքներու ազգապետերու ուշադրութիւնը գրաւելու: Անոնք՝ այս շարժումի ծաւալումին մէջ իրենց ազդեցութեան տկարացումը նախատեսելով, խիստ զօրաւոր հակազդեցութիւն մը ցոյց տուին: Քաջալերուած Հռոմի Կղեմէս ԺԲ. (1730-40) Պապի 1738ի կոնդակէն, որ ազատ-որմնադիրները կը բանադրէր<sup>11</sup>, Պոլսոյ մէջ Կաթողիկէ Եկեղեցւոյ առաջնորդները, Օրթոտոքս Եկեղեցւոյ Կիւրեղ Ե. (1748-51) Պատրիարքը եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Յակոբ Նալեան Զմարացի (1741-49 եւ 1752-84) Պատրիարքը ժողով մը գումարեցին եւ որոշեցին հաւաքական պայքարի ձեռնակել: Ազատ-որմնադիրներու գաղափարաբանութեան տարածումը քրիստոնեայ եկեղեցիներու

գոյութեան սպառնացող աղանդ մը նկատելով, անոնք Բ. Դրան մօտ իբր այդ բողոք մը ներկայացուցին: Մինչ Պոլսոյ լատին կրօնապետը ազատ-որմնադիրները իբր կախարդներ (sorcières) կը ներկայացնէր, յոյն եւ հայ կրօնապետերը զանոնք ցոյց կու տային իբր նոր «աղանդ» ի մը առաջնորդները, որոնք ոչ միայն յոյները եւ հայերը իրենց ազգային եկեղեցիէն հեռացնել ծրագրած էին, «այլ նոյնիսկ մահմետականները կրօնափոխ ընել կը ձգտին»<sup>12</sup>: Բ. Դուռը՝ ընդառաջ երթալով իրեն ներկայացուած բողոքներուն, Ֆրանսայի դեսպանին պատուիրեց, որ Պոլսոյ եւ Չմիւռնիոյ Ֆրանսացի վաճառականները այլեւս իրենց գործունէութիւնը դադրեցնեն: Դեսպան Տէ Գ'Ալլէօր Չմիւռնիոյ հիւպատոս Շարլ-Քլոտ Տը Բէյսոնէլի (Charles-Claude de Peyssonnel) հրահանգեց որ Ֆրանսացի առեւտրականները հեռու մնան ազատ-որմնադիրներու կազմակերպութիւններէն<sup>13</sup>:

Այսուհետեւ, կը տեսնենք, թէ եւրոպացի ազատ-որմնադիրները գրեթէ մէկ դար, Օսմանեան Կայսրութեան գլխաւոր առեւտրական կեդրոններուն մէջ, ինչպէս Պոլիս, Հալէպ կամ Չմիւռնիա, տենդագին գործունէութիւն մը ցոյց չեն տար: Բայց եւ այնպէս, Անգլիոյ Մեծ Օթեակին անդամ կարգ մը վաճառականներ եւ կամ դիւանագիտական գործակալներ, որոնք Արեւելքի մէջ կը պաշտօնավարէին, ազատ-որմնադիրներու գաղափարաբանութեան ջահը վառ պահեցին, սակայն առանց տեղացի ժողովուրդին մէջ տարածել փորձելու: Կարգ մը փաստաթուղթեր եւ վկայութիւններ կը հաստատեն, թէ ԺԹ. դարու առաջին քառորդին, Հալէպի, Ադեքսանդրիոյ եւ Չմիւռնիոյ մէջ ազատ-որմնադիրներու օթեակներ գոյութիւն ունեցած են: Չոր օրինակ, Չմիւռնիոյ մէջ, Ֆրանսայի Մեծ Արեւելք (Grand Orient) օթեակի հովանաւորութեան տակ գոյութիւն ունէր Միացեալ Ազգեր (Nations Réunies) անունը կրող օթեակ մը: Այդ օթեակի 1819 եւ 1824 տարիներուն վերաբերող թղթածրարները կը փաստեն, թէ Եգէականի այդ նաւահանգիստին մէջ գործող օթեակին բոլոր անդամները օտարահպատակ վաճառականներ, արհեստաւորներ կամ դիւանագիտական գործակալներ էին: Այս օթեակի շուրջ 150 անդամները Ֆրանսացի, անգլիացի, ամերիկացի, աւստրիացի, իտալացի կամ ռուս էին, եւ հատ մըն իսկ օսմանահպատակ «եղբայր» չկար<sup>14</sup>: Մինչդեռ ծանօթ է թէ Չմիւռնիոյ մէջ յոյն եւ հրեայ համայնքները մեծ թիւ կը ներկայացնէին եւ այդ շրջանի տնտեսական կեանքին մէջ կարեւոր դեր մը կը կատարէին: Չմիւռնիոյ մէջ Անգլիոյ հիւպատոս Չարլզ Պլանթի (Charles Blunt) մէկ տեղեկագրին համաձայն, ԺԹ. դարու կիսուն, քաղաքին մէջ 41000 թուրքեր, 12000 հրեաներ, 7500 յոյներ եւ շուրջ 6000 հայեր կը բնակէին<sup>15</sup>:

Տարբեր երկիրներու ազատ-որմնադիրներու դիւաններուն մէջ պահուած վաւերագրերը մեզի կը թոյլատրեն հաստատել, թէ ազատ-որմնադրական գաղափարաբանութիւնը ԺԹ. դարու երկրորդ կիսուն Օսմանեան Կայսրութեան մէջ նոր թափ մը ստացաւ 1853-58ի Խրիմի պատերազմէն յետոյ քաղաքական դէպքերու զարգացումին հետեւանքով պարտադրուած ընկերային յեղաշրջումներուն պատճառաւ: Արդարեւ, Օսմանեան Կայսրութիւնը ԺԹ. դարու առաջին քառորդէն յետոյ, այլեւս ի վիճակի չէր երկրին մէջ հետզհետէ աճող ապստամբական շարժումները զսպելու: Իր գոյութիւնը պահելու համար ան նոյնիսկ յաճախ պարտադրուած էր եւրոպական տէրութիւններէն օգնութիւն խնդրելու: Յատկապէս, երբ Հոկտեմբեր 1853ին, կրկին ռուս-թրքական պատերազմ մը ծագեցաւ, Անգլիա եւ Ֆրանսա՝ Օսմանեան Կայսրութեան յանկարծակի փլուզումէն խիստ մտահոգ, Միջին Արեւելքի մէջ հաւասարակշռութիւնը պահելու եւ Պոլիսը հաւանական ռուսական գրաւումէ մը զերծ պահելու համար, 1854ի գարնան պատերազմին մասնակցեցան եւ օսմանեան բանակներու կողքին գէն ի ձեռին կռուելով, զանոնք ստոյգ պարտութենէ մը փրկեցին: Երախտապարտ Բ. Դուռը այսուհետեւ Արեւմուտքի մեծ պետութիւններու հանդէպ խիստ բարեացակամ եւ հանդուրժող քաղաքականութիւն մը վարել սկսաւ՝ մանաւանդ որ, պատերազմի ընթացքին՝ 1855ին, ան իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, զինուորական ծախքերը հոգալու համար, իր դաշնակիցներէն մեծ փոխառութիւն մը կատարելու պարտադրուած եղած էր:

Խրիմի պատերազմին գլխաւոր դրական նորութիւնը եղաւ այն, որ Բ. Դուռը՝ իր դաշնակիցներուն եւ մանաւանդ՝ Պոլսոյ մէջ Անգլիոյ դեսպան, երեւելի դիւանագէտ Սըր Սթրաթֆորտ Քաննինկի (Stratford Canning, 1786-1880) յորդորներուն անսայով, Փարիզի խաղաղութեան պայմանագրի (30 Մարտ 1856) ստորագրութենէն առաջ իսկ՝ 18 Փետրուար 1856ին, իր իսկ յօժար կամքով բարենորոգումներու Հաթիթ-Հիւմայիւն հրովարտակը յայտարարեց եւ Օսմանեան Կայսրութիւնը եւրոպական մեծ տէրութիւններու հսկողութենէն զերծ պահեց:

Այս հրովարտակով Բ. Դուռը անգամ մը եւս կը հաստատէր թէ նոյեմբեր 1839ի Հաթիթ-ը Շէրիֆի տրամադրութիւնները կ'երաշխաւորէ եւ թէ այսուհետեւ տէրութեան բոլոր հպատակները նոյն իրաւասութիւնները եւ նոյն պարտականութիւնները պիտի ունենան: Այսուհետեւ ոչ ոք, Օսմանեան Կայսրութեան մէջ, կրօնքի տարբերութեան պատճառաւ որեւէ հալածանքի կամ խտրականութեան ենթակայ պիտի ըլլայ: Կայսրութեան հպատակ բոլոր ժողովուրդներուն ներկայացուցիչները այսուհետեւ պիտի կարենան իրենց փափաքած վարժարանները յաճախել, ներառեալ՝ զինուորական վարժարանը եւ իրա-

ւունք պիտի ունենան իրենց ուսման եւ կարողութեան համաձայն պաշտօններ ստանձնել: Միաժամանակ, ոչ-խալամները եւս գինուորական ծառայութեան համար բանակ պիտի կանչուին<sup>16</sup>:

Սուլթան Ապտիւլ Մէճիտ (1839-61) միաժամանակ սոյն հրովարտակով կը վերահաստատէր, թէ իր նախորդներուն կողմէ օսմանահպատակ քրիստոնեայ եւ այլ ոչ-մահմետական համայնքներու նախապէս տրուած բոլոր առանձնաշնորհումները միշտ ի գօրու են եւ պիտի շարունակուին: Սուլթանը կը հրամայէր իւրաքանչիւր ոչ-խալամ համայնքի ազգապետի կանոնագիր մը պատրաստել, իր ժողովուրդին մշակութային, կրօնական եւ ընկերային հարցերը իրեն յարմար դատած կերպով կառավարելու եւ անոր յառաջդիմութիւնն ու բարգաւաճումը լաւագոյնս ապահովելու համար: Իւրաքանչիւր ոչ-խալամ համայնք, իր անդամներէն բաղկացած յանձնախումբ մը պէտք է կազմէր, որ որոշ պայմանաժամի մը ընթացքին կանոնագիր մը պատրաստելով զայն պետութեան գործադիր մարմնին յղէր: Այս ծրագրին նպատակն էր բոլոր համայնքներուն առանձնայատուկ մշակութային, ընկերային եւ կրօնական-եկեղեցական պայմաններու բարեփոխումը ապահովել, որ պիտի նպաստէր համայնքներու յառաջդիմութեան:

Ըստ այդ հրովարտակի մէկ այլ յանձնառութեան, այսուհետեւ Օսմանեան կայսրութեան հպատակ ժողովուրդներուն նման, օտարները եւս՝ կայսրութեան օրէնքներու տրամադրութիւնները յարգելով, առանց որեւէ արգելքի, պիտի կարենային իրենց փափաքած վայրերուն մէջ կալուածներ գնել եւ այնտեղ հաստատուիլ: Երկրին տնտեսական պայմանները բարելաւելու եւ առեւտուրը զարգացնելու մտօք, դրամատուներ պիտի հիմնուէին<sup>17</sup>:

Այս կայսերական հրովարտակը, Օսմանեան Պետութեան նման շարիհայի սկզբունքներով կառավարուող բազմակրօն երկրի մը աւելի քան հինգ դարէ ի վեր մահմետական եւ ոչ-խալամ ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցող ընկերային, կրօնական, տնտեսական բոլոր պատուարները մէկ օրէն միւսը կը փլցնէր: Անոր հրապարակումը, առաջին մէկ օրէն իսկ, կայսրութեան բազմաթիւ նահանգներուն մէջ մոլիբդանդ մահմետականներուն մօտ խիստ զայրոյթ յառաջացուց<sup>18</sup>: Այդ պատճառաւ ալ Հաթիթ-ը Հիւմայիւնի առաջադրած նորութիւնները թէեւ շունդալից կերպով յայտարարուեցան, բայց խօսքէն գործադրութեան միջեւ տարբերութիւնը ահագին ըլլալով, սոյն խոստումներէն ոմանք մինչեւ օսմանեան սահմանադրութեան վերահաստատումը՝ 24 Յուլիս 1908ին, մեռեալ տառ մնացին:

Նախքան մասոնական օթեակներու Պոլսոյ եւ կայսրութեան կարգ մը այլ գլխաւոր քաղաքներու մէջ յաջորդաբար հիմնումին մասին

խօսիր, յոյժ կարեւոր է հակիրճ կերպով անդրադառնալ ժ.թ. դարու առաջին կիսուն օսմանեան մայրաքաղաքի հայ համայնքին ընկերային եւ ազգային վիճակին եւս:

ժ.թ. դարու կիսուն, Պոլսոյ ընդհանուր բնակչութիւնը՝ ըստ ստոյգ աղբիւրներու, 778,000 հոգի կը հաշուէր: Այս բնակչութեան 421,000ը մահմետական էր (թուրք, ալպանացի, չէրքէզ կամ արաբ), 155,000ը՝ հայ, 145,000ը՝ յոյն, 38,000ը՝ հրեայ եւ 21,000ը՝ գինուոր եւ օտարահպատակ<sup>19</sup>:

Պոլսահայ համայնքը առհասարակ բարեկեցիկ վիճակ մը կը պարզէր: Առեւտրական, ազատ ասպարէզի տէր՝ բժիշկ, ճարտարագետ կամ սեղանաւոր, արհեստաւոր եւ կամ գործաւոր, հայ տարրը մայրաքաղաքի տնտեսական կեանքին մէջ գործօն դեր մը ունէր: 1840ականներէն սկսեալ, ժողովուրդին վրայ ամիրաներուն ունեցած դարաւոր ազդեցութիւնը զօրաւոր հարուած մը կը ստանայ, մանաւանդ երբ, իրենց իսկ նախաձեռնութեամբ 1838ին հիմնուած Սկիւտարի Ճեմարանը՝ ուսուցման ծրագրի մը գործադրութեան առթիւ ծագած տարակարծութեան մը պատճառաւ, 1841ի աշնան կը փակուի<sup>20</sup>: «Ճեմարանի խնդիրն էր, - կը գրէ պատմաբան Յակոբ Ճ. Սիրունի, - որ փոթորկեց դարուն առաջին կէսը, իրարու դէմ հանելով հայ ամիրաներն ու հայ էսնաֆը, իսկ հայ էսնաֆին կռնակը ժողովրդական լայն խաւերը կային, որոնք միջամտեցին շատ անգամ իրենց ցոյցերով»<sup>21</sup>:

Պոլսոյ մէջ այս յառաջդիմական շարժումի տարածումին իրենց մասնակցութիւնը կը բերէին մանաւանդ այն երիտասարդ եւ զարգացած տարրերը, որոնք՝ Եւրոպայի մէջ իրենց ուսման շրջանը աւարտելէ յետոյ, իրենց ծննդավայրը վերադարձած էին: Արդարեւ, 1840ականներէն յետոյ կը տեսնենք, թէ ոչ միայն հարուստ ամիրաներու զաւակներն էին, որ Եւրոպա կը մեկնէին՝ բարձրագոյն ուսման հետեւելու համար, այլ ազգասէր ազգայիններ եւ առեւտրականներ կը քաջալերէին աղքատ ընտանիքներու ուսումնատենչ տղաքր, որպէսզի անոնք եւս Արեւմուտքի ուսման կեդրոններու մէջ կարենան բարձրագոյն կրթութեան հետեւիլ: Այդ թուականներուն, նախընտրութիւնը կը տրուէր բժշկական, երկրագործական եւ առեւտրական մասնագիտական վարժարաններուն եւ ճիւղերուն: Այս խումբ մը երիտասարդներն էին, որոնք յետագային՝ Պոլիս վերադառնալով, քաղաքի իրենց յառաջդիմական ազգակիցներուն հետ, Օսմանեան կայսրութեան հպատակ հայ ժողովուրդի ազգային, ընկերային եւ մշակութային կեանքին նոր ուղղութիւն մը տուին:

Հաթիթը Հիւմայիւնով, երբ սուլթանը իւրաքանչիւր ոչ-խալամ համայնքի ազգապետի հրամայեց իր ժողովուրդին համար կանոնադիր մը պատրաստել, Եւրոպա ուսում ստացած երիտասարդները եւ պոլ-

սահայութեան ազգասէր ու յառաջդիմասէր տարրերը՝ միանալով, նախաձեռնութիւնը ձեռք առին եւ Ազգային Սահմանադրութիւնը պատրաստեցին: Հայոց կողմէ՝ «Ազգային Սահմանադրութիւն», իսկ Բ. Գրան կողմէ՝ *Նիզամնամէ-ի Միլլէթ-ի Հրմէնիէն* կոչուած օսմանահպատակ Հայ ազգի կանոնադրութեան պատրաստութեան մէջ գլխաւորաբար դեր ունեցան Տոքթ. Նահապետ Ռուսինեան (1819-1876), Տոքթ. Մէրվիչէն (1815-1897), Նիկողոս Պալեան (1825-1858) եւ Գրիգոր Օտեան (1834-1887)<sup>22</sup>: Այս կանոնադիրը՝ յետ երկարատեւ ուսումնասիրութեան, 24 Մայիս 1860ին է միայն, որ պետութեան ներկայացուցաւ:

Այդ թուականներուն կը զուգադիպի նաեւ բազմաթիւ եւրոպացիներու մուտքը Պոլիս, օգտուելով Օսմանեան Տէրութեան բարեացակամ քաղաքականութենէն: Արդարեւ, կը տեսնենք թէ բազմաթիւ եւրոպացիներ, մանաւանդ՝ անգլիացի եւ ֆրանսացի գործատէրեր, նաւաշինարաններու մէջ աշխատող ճարտարագէտներ եւ արհեստաւորներ, ինչպէս նաեւ փութով դրամ շահելու եւ դիրք ապահովելու հետամուտ արկածախնդիրներ Պոլիս կամ Զմիւռնիա կ'երթային ու կը հաստատուէին<sup>23</sup>:

Խրիմի պատերազմէն յետոյ Արեւելք մեկնող այս եւրոպացիները իրենց հետ տարին նաեւ իրենց բարքերն ու սովորութիւնները: Պոլսոյ մէջ փչող ազատութեան այս գեփիւռի առաջին արգասիքը եղաւ ազատ-որմնադիրներու փիլիսոփայութեան եւ ընկերային գաղափարաբանութեան արագ տարածումը Միջին Արեւելքի մէջ, ուր մասոնական օթեակները սկսան յաջորդաբար սունկի նման բուսնիլ: Օսմանեան Տէրութեան կողմէ, տարբեր թուականներու, եւրոպական տէրութիւններու տրուած զանազան առանձնաշնորհումներուն շնորհիւ, օտարահպատակներու կողմէ հիմնուած այս օթեակներէն իւրաքանչիւրը կը վայելէր հովանաւորութիւնը այն դեսպանատան, որուն ներկայացուցած երկրին հպատակութիւնը ունէին անոր հիմնադիրները: Սկզբնական շրջանին ազատ-որմնադիրներու օթեակներուն մէջ գումարուող ժողովները տեղի կ'ունենային այդ տէրութեան լեզուով:

Պոլսոյ մէջ, երկար տարիներէ ի վեր, վաճառականութիւնը՝ մանաւանդ արտաքին առեւտուրը, ոչ-խլամ համայնքներու անդամներուն ձեռքը կը գտնուէր<sup>24</sup>, որոնք, այդ առթիւ յաճախ Եւրոպա կը ճամբորդէին: Շատեր՝ օտար լեզուներու գիտակ, օսմանեան մայրաքաղաքին մէջ առանձնաշնորհեալ դիրք մը կը գրաւէին: Միւս կողմէ, կրօնական եւ մշակութային գործօնը, որ մահմետականները եւրոպացիներէ կը հեռացնէր, ընդհակառակն օսմանահպատակ ոչ-խլամ ընկերութիւնները անոնց կը մերձեցնէր: Հետեւաբար, տեղացի զարգա-

ցած եւ նախաձեռնող ոչ-խալամները ջերմօրէն դիմաւորեցին ազատ-որմնադիրներու սկզբունքները, որոնք ճեղքայրութիւն, համերաշ-խութիւն եւ իրարօգնութիւն» կը քարոզեն:

Ամէն պարագայի, Պոլսոյ մէջ հիմնուած առաջին օթեակները ոչ-խալամներու մօտ աւելի համակրանք գտան քան՝ մահմետականներու: Արեւմուտքի վարք ու բարքին, ընկերային կեանքի պայմաններուն եւ սովորութիւններուն հանդէպ միշտ կասկածանքով մօտեցող մահմետական պահպանողական ընկերութիւնը միայն քանի մը տարի յետոյ դրապէս պիտի արձագանգէր ազատ-որմնադրական սկզբունքներուն: Այսուհանդերձ, արեւմտեան երկիրներու ազատ-որմնադրական օթեակներու անդամներուն մէջ կարելի է հանդիպիլ օսմանեան կառավարութեան Եւրոպայի դեսպանատուներուն մէջ պաշտօնավարող մահմետական դիւանագէտներու անուններու: Ըստ թրքական տուեալներու, ասոնց առաջիններէն է երեւելի դիւանագէտ, քանիցս մեծ եպարքոս նշանակուած Մուսթաֆա Ռէշիտ փաշան, որ Լոնտոն՝ իբր դեսպան պաշտօնավարած ժամանակ, արդէն մասոնական լոյսը ստացած էր<sup>25</sup>: Յետագային, Օսմանեան Տէրութեան Փարիզի դեսպանատան պաշտօնեաներէն Ալի Պէյ (1858ին) եւ Ֆահրի Պէյ (1861ին) Ֆրանսայի Մեծ Արեւելքի ենթակայ Յարատեւող Բարեկամութիւն (La Persévérante Amitié) օթեակին ընծայուած են<sup>26</sup>: Նոյն օթեակի դիւաններու արձանագրութիւններուն մէջ կը տեսնենք նաեւ օսմանեան դեսպանատան խորհրդական Յակոբ Էֆենտի Կրճիկեանի եւ պոլսահայ դրամատէր Երամեանի անունները<sup>27</sup>:

Օսմանեան Տէրութեան այդ շրջանին վարած համեմատաբար լայնախոհ ու հանդուրժող քաղաքականութենէն քաջայերուած, խուճր մը պոլսարնակ անգլիացի ազատ-որմնադիրներ, Անգլիոյ Մեծ Օթեակի հովանաւորութեան տակ, 25 Նոյեմբեր 1856ին հիմնեցին թիւ 887 Արեւելեան (Oriental) անունը կրող առաջին օթեակը<sup>28</sup>, որ կը բաղկանար 28 անգլիացի, երեք գերմանացի եւ մէկական ամերիկացի, իրլանտացի, մալթացի, սկոտլիացի եւ քորֆուցի անդամներէ: Անոր բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ 7 Օգոստոս 1857ին:

Նոյն օրն իսկ, ըստ Անգլիոյ Մեծ Օթեակի դիւաններու տուեալներուն, կը տեսնենք թէ երկու հայեր կը յարին սոյն օթեակին: Ասոնցմէ մին՝ Սերովբէ Ազնաւուր (1814-1890) Պոլսոյ հայ կաթողիկէ համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն էր: Նախապէս երիցս Լոնտոն գտնուած, 1854 Փետրուարին արդէն Անգլիոյ Մեծ Օթեակի ենթակայ թիւ 201 Յորդանան (Jordan) օթեակին ընծայուած էր<sup>29</sup>: Իսկ միւսը՝ երիտասարդ վաճառական մը՝ Գօզմա Աղջիկեան, Մանչեսթրի թիւ 168 Ուղղամտութիւն (Integrity) օթեակին անդամ էր:

Արեւելեան Օթեակը Պոլսոյ մէջ հիմնուած օթեակներու ամենա-  
 երկարակեացը պիտի ըլլար: Անիկա Պոլիս բնակող բազմաթիւ երեւելի  
 անգլիացի պաշտօնեաներու, առեւտրականներու ու զանազան ասպա-  
 րէզի տէր մարդոց հաւաքավայր եղաւ, մանաւանդ՝ ԺԹ դարուն: Ի  
 բացառեալ 1914-1918ի համաշխարհային առաջին պատերազմի տարի-  
 ներէն, երբ՝ ինչպէս ազատ-որմնադրական բացատրութեամբ կ'ըսեն,  
 առժամարար «քունի մէջ մտաւ» ան, Արեւելեան Օթեակը, մինչեւ 1935,  
 իր գործունէութիւնը կանոնաւորաբար շարունակեց: Այդ թուակա-  
 նին, երբ Թուրքիոյ հանրապետական կառավարութիւնը օրէնք մը  
 քուէարկելով բոլոր ազատ-որմնադրական օթեակները փակել որոշեց,  
 Արեւելեան Օթեակը եւս փակուեցաւ: Համաշխարհային երկրորդ պա-  
 տերազմէն ետք՝ 1948ին, երբ Թուրքիոյ մէջ ազատ-որմնադիրներու  
 գործունէութեան դարձեալ արտօնութիւն տրուեցաւ, Արեւելեան  
 Օթեակը վերսկսաւ իր աշխատանքներուն, մինչեւ 1949, երբ վերջնա-  
 կանապէս դադրեցուց իր գործունէութիւնը:

Այս օթեակը, սկիզբէն մինչեւ իր փակումը, ունեցաւ 17 մահմետա-  
 կան եւ 15 հայ «եղբայր»ներ: Այս օթեակին անմիջապէս ընծայուող հայ  
 «եղբայր»ներէն յիշենք Մանաս՝ 1859ին, Սրապիոն Հէքիմեան՝ 1860ին,  
 Սերովրէ Թագուորեան՝ 1860ին եւ Միքայէլ Ալիշան՝ 1860ին: Յետագա-  
 յին՝ 7 Ապրիլ 1911ին, պոլսահայ համայնքի ծանօթ ղէմքերէն, Օսմա-  
 նեան Դրամատան տնօրէն ու հանրապետական ժամանակաշրջանի  
 Թուրքիոյ խորհրդարանի անդամ Պերճ Քէրէսթէճեան (Türker) եւս  
 նոյն օթեակին պիտի ընծայուէր:

Պոլսոյ մէջ հիմնուած երկրորդ օթեակը Ֆրանսայի Մեծ Արեւելքի  
 հովանաւորութեան տակ հիմնուած եւ Վոսփորի Աստղ (l'Etoile du  
 Bosphore) անունը կրող օթեակն էր, որ հիմնուեցաւ Պոլիս բնակող  
 Ֆրանսացի վաճառականներու եւ գործատէրերու կողմէ 26 Ապրիլ  
 1858ին<sup>30</sup>: Յետագային այս օթեակին ընծայուեցան բազմաթիւ հրեայ  
 առեւտրականներ: Սահմանափակ գործունէութիւն մը ունեցող այս  
 օթեակը երկարակեաց չեղաւ: Ֆրանսայի Մեծ Արեւելքի Փարիզի  
 դիւանները ցոյց կուտան, թէ միայն քանի մը հայ «եղբայր»ներ  
 ընծայուած են այս օթեակին<sup>31</sup>:

1858 Յունիսին, անգլիացի դիւանագէտ Սըր Հենրի Պուլվըր (Henry  
 Bulwer, 1801-1872) յաջորդեց Քաննինկի, իբրեւ Պոլսոյ մէջ Բրիտանիոյ  
 դեսպան: Ան նախապէս՝ 1837-38 տարիներուն, մօտաւորապէս երկու  
 տարի, պաշտօնավարած էր Պոլսոյ անգլիական դեսպանատան մէջ,  
 իբր քարտուղար: Իսկ Խրիմի պատերազմէն յետոյ, երբ Պալքաններու  
 մէջ խաղաղութեան հաստատման համար եւրոպական երկիրներու

մասնակցութեամբ Դանուբի յանձնաժողովը կազմուած էր, (որ 1856-58ի միջեւ գործեց), Պուլվրը մաս կը կազմէր անոր, իբր անգլիական պատուիրակութեան անդամ: Յատկապէս, իր այս պաշտօնավարութեան շրջանին է, որ ան մօտէն ծանօթացած էր Օսմանեան կայսրութեան այլազան ժողովուրդներու հոգեբանութեան, անոնց ընկերային կեանքին ու բարքերուն, ու խորապէս թափանցած՝ այլազան համայնքներու փոխ-յարարբերութիւններու ծալքերուն մէջ: Այս շրջանին է նաեւ, որ Պուլվրը բարեկամութիւն հաստատած էր նոյնպէս Պալքաններու մէջ պաշտօնավարող, Մարաշի յետագայ գինուորական կառավարիչ Ահմէտ Ազիզ Փաշային հետ:

Վերոյիշեալ պատճառներով, անգլիացի դիւանագէտը չէր անգիտանար թէ Հաթիթ-ը Հիւմայիւնի բովանդակութեան տառացիօրէն գործադրութիւնը Օսմանեան կայսրութեան նման բազմակրօն երկրի մը մէջ, այնքան ալ դիւրին չէր կիրարկել: Պուլվրը՝ ինք եւս ազատորմնադիր եւ Անգլիոյ Մեծ Օթեակի Հէրթֆորտ (Herteford) օթեակին անդամ ըլլալով, ուզեց նախեւառաջ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան եւ սկզբունքներուն շուրջ հաւաքել, զիրար մօտեցնել քաղաքին մահմետական եւ ոչ-խալամ համայնքներու մտաւորական դէմքերը, առեւտրականներն ու ծանօթ անձնաւորութիւնները: Նկատի առնելով նաեւ, թէ իւրաքանչիւր օթեակ կը վայելէր իր երկրի դեսպանատան բարոյական պաշտպանութիւնը, շատ բնական է, որ ազատ-որմնադիրներու օթեակներու հիմնումը, Միջին Արեւելքի մէջ Անգլիոյ քաղաքական թէ տնտեսական ազդեցութեան տարածումին ու ամրացումին ի նպաստ մեծ դեր մը կրնար ունենալ: Ֆրանսացի իրաւագէտ եւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդի անդամ Լուի Ամիապլ (Louis Amiable, 1837-97), որ նոյն տարիներուն Պուլսոյ մէջ իր փայլուն գործունէութեամբ քանի մը օթեակներու հիմնումին եւ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան դրօշակակիր պիտի ըլլար, Պուլվրի ծրագրին ներքին ծալքերուն ականատես ըլլալով, յետագային պիտի գրէր. «Պուլվրը համոզուած էր թէ ազատ-որմնադրութիւնը մեծ առաքելութիւն մը ունէր Մերձաւոր Արեւելքի մէջ»<sup>32</sup>:

Պուլվրը, նախ՝ 1859 Մայիսին, Պուլսոյ մէջ հիմնուած անգլիական Արեւելեան օթեակին յարեցաւ: Իր դեսպանութեան ժամանակ հիմնուած առաջին օթեակը Չմիւռնիոյ մէջ է: Սոյն օթեակի հիմնադիր անդամներուն մէջ կը տեսնենք Հայտ Քլարք՝ իբրեւ առաջին նախագահ, եւ «եղբայր» Ազնաւուր՝ իբր աւագ-վերահսկիչ: Թիւ 808 եւ Հոմերոս (Homer) անունը կրող այս օթեակի հիմնումին մասին հիմնադիրներուն կողմէ Անգլիոյ Մեծ Օթեակին ուղարկուած խնդրագիրը 19 Նոյեմբեր 1859 թուականը կը կրէր: Հիմնադիրներուն մէջ Ազնաւուր

միակ օսմանաՀատական էր: Միւսները ընդՀանրապէս անգլիացի էին: Կային նաեւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի անդամ երկու Ֆրանսացիներ: Հոմերոս օթեակի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 7 Օգոստոս 1860ին, որուն անձամբ նախագահեց Պուլվրը<sup>33</sup>:

Պուլվրը նաեւ Պոլսոյ մէջ Հիմնեց օթեակ մը, որ կրեց իր անունը: Թիւ 891 Պուլվրը (Bulwer) օթեակը 9 Նոյեմբեր 1861ին Հիմնուեցաւ նախ՝ Վոսփորի եւրոպական ցամաքամասի՝ Սեւ ծովու ափին գտնուող Պիւլիքտէրէ գիւղին մէջ, ապա փոխադրուեցաւ քաղաք<sup>34</sup>: Իր անդամներուն մէջ անմիջապէս կը հանդիպինք Ազնաւուրի անուան, որ միջոց մը՝ սոյն օթեակին Գերյարգելի Վարպետը ըլլալով, նախագահեց անոր: Պուլվրը օթեակը ունեցաւ 11 Հայ եւ 16 մահմետական «եղբայր»ներ<sup>35</sup>:

1860ականներուն Գերմանիոյ միութիւնը տակաւին չէր իրականացած եւ Բրուսիա Օսմանեան Կայսրութեան քաղաքական կեանքին մէջ դեռ ազդեցիկ դեր մը չունէր: Այսուհանդերձ, Պոլսոյ եւ Զմիւռնիոյ նման առեւտրական գլխաւոր կեդրոններու մէջ գերմանախօս Համայնք մը կար, որ մեծաւ մասամբ կը բաղկանար ծագումով հրեաներէ: Անոնք այդ քաղաքներու առեւտրական հրապարակին վրայ աշխոյժ դեր մը ունէին: Պուլվրը, որ կ'ուզէր այդ գործունեայ տարրերը եւս Անգլիոյ ազդեցութեան ենթարկել, յաջորդաբար Պոլսոյ մէջ Հիմնեց 30 Մարտ 1860ին թիւ 818 Գերմանական Դաշնակցութիւն (Deutscher Bund), իսկ 30 Մարտ 1861ին ալ՝ Զմիւռնիոյ մէջ թիւ 898 Յաղթանակ (La Victoire) օթեակները: Յաղթանակ օթեակի Հիմնադիր անդամները բոլորն ալ Հոմերոս օթեակի անդամ «եղբայր»ներ էին: Այս երկու օթեակներու ժողովները գերմաներէնով տեղի կ'ունենային:

Անգլիոյ Մեծ Օթեակի հովանաւորութեան տակ, բայց յատկապէս Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ գերմանախօսներու ուղղուած վերոյիշեալ երկու օթեակներու հիմնումը, ըստ ժամանակակից պատմաբանի մը, «կը թուի թէ Համպուրկի Մեծ Օթեակի ազգային Հպարտութիւնը վիրաւորած էր, որ, 1862ին կը շտապէր օսմանեան մայրաքաղաքին մէջ իր առաջին օթեակը հիմնել»<sup>36</sup>:

Արդարեւ, Խրիմի պատերազմէն յետոյ, զանազան տէրութիւններու հովանաւորութիւնը վայելող ազատ-որմնադիրներու օթեակներու յաջորդաբար հիմնումով, իւրաքանչիւր տէրութիւն կը թուի Համոզուած ըլլալ, թէ իր քաղաքական եւ տնտեսական ազդեցութեան ընդարձակումին առնթեր, այդպէսով, Արեւելքի այլազան ժողովուրդներու մօտ բարոյական նոր յաղթանակ մըն ալ արձանագրած կ'ըլլար:

Ազնաւուր լաւ ծանօթ էր Պոլսոյ մէջ գոյութիւն ունեցող կրօնական թէ ընկերային մտայնութեան: Գիտէր, թէ մայրաքաղաքին մէջ կար դասակարգ մը՝ խիստ աւանդապահ եւ պահպանողական, որ բնաւ հաշտ չէր դիտեր Հայ Համայնքին մէջ ազատ-որմնադիրներու

գաղափարաբանութեան տարածումը<sup>27</sup>։ Այս պատճառաւ է, որ թէեւ կը ցանկար զուտ հայկական օթեակ մը հիմնելու նախաձեռնութիւնը ձեռք առնել, սակայն բաւականացաւ 1862ի ամառը Պոլսոյ մէջ Հայկ կամ Օրիոն բարեսիրական միութիւնը հիմնելով<sup>28</sup>։ Այս միութեան նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ Համայնքին կարօտեալ անդամներուն առաւելագոյն շահով օգտակար լլլալ։ Բայց Ազնաւուր, ազատորմնադիրներու գաղափարաբանութեան տարածման Համար իր տարած աշխատանքով ծանօթ դէմք մը լլլալով, ըստ-ըստներու առաջքը առնելու եւ հաւանական հակազդեցութիւնները կանխելու Համար, մամուլի միջոցաւ իր նախաձեռնութեան ծրագիրը անմիջապէս Հասարակութեան ուշադրութեան յանձնեց։ Հայկ միութեան պաշտօնական բացումի արարողութիւնը տեղի ունենացաւ 21 Օգոստոս 1862ին, Բերա Քրէփէնի անցքին մէջ, անգլիացի հիւրերու եւ Հայ անդամներու ներկայութեամբ։ Քանի մը օր յետոյ, Մասիս շաբաթաթերթը, որու արտօնատէր Կարապետ Իւթիւճեան կը բաժնէր Ազնաւուրի գաղափարները, ամբողջութեամբ հրատարակեց անոր հաղորդագրութիւնը։

Ազնաւուր կը գրէ. «Այս նորահաստատ ճիւղը Մանչեսթրի «Միութեան Օտտ Փէլլօզ» եղբայրութեան ճիւղին միացած է, եւ ոչ թէ Ֆրանմասօններուն եւ Լէվանթ Հերայտն ալ Օտտ Փէլլօզ օթեակը գրած է եւ ոչ թէ Ֆրանմասօն։

«... Ետտ ատենէ ի վեր կը փափաքէինք, որ մեր ազգն ալ, Ֆրանմասօնեան ընկերութեան դէմ ունեցած անտեղի նախապաշարումները թօթափելով, եղբայրական հիմանց վրայ ընկերութիւն մը Հաստատէր, որով կարողանար չքաւոր, թշուառ, հիւանդ եւ պանդուխտ մարդոց նպաստ եւ օգնութիւն ընել. վասնզի ճշմարտապէս Համոզուած էինք, որ այն ընկերութեան նպատակին մէջ ոչ տէրութեան, ոչ կրօնի, ոչ խղճմտանաց եւ ոչ ալ աստուածապաշտութեան դէմ բան մը կար, ինչպէս որ ոմանք տգիտարար այնպէս կ'երեւակայեն։ Սակայն, նկատելով թէ Ֆրանմասօնեան եղբայրութեան դէմ ոմանք գաղտնի եւ ոմանք ալ յայտնապէս անգսպելի ընդդիմութիւն մը ունին, (թէեւ լիովին անհիմն է, մանաւանդ երբ նկատեն, որ թագաւորէն մինչեւ յետին գործաւորը անդամ կրնայ գրուիլ) աւելի պատշաճ Համարեցանք Օտտ Փէլլօզ եղբայրութեան ճիւղ մը Հաստատել եւ Օրիոն կամ Հայկ անուանել, ինչպէս որ Անգլիացիք ալ Անգլիոյ Վեհափառ Թագուհոյն Վսեմափայլ Սրբ Հէնրի Լ. Պուլլրը դեսպանի հովանաւորութեան ներքեւ եւ մեր օգոստափառ կայսեր տէրութեան Հաճութեամբ Աստղ Արեւելից կոչուած ճիւղը Հաստատած են, որուն յարակից է եւ Հայկ ճիւղը»<sup>29</sup>։

Սոյն յայտարարութենէն յետոյ, Ազնաւուր կոչ ըրաւ ամէն անոնց, որոնք կը փափաքէին անդամակցիլ վերոյիշեալ ընկերութեան, թէ

«ամէն մարդ կրնայ առանց խտրութեան ազգի, կրօնի եւ վիճակի անդամակից ըլլալ սոյն ընկերութեան. բաւական է որ արատաւոր, ախտաւոր, մոլի եւ վատ բարուց տէր չըլլայ եւ ընկերութեան մէջ յարգ եւ պատիւ ունենայ»<sup>40</sup> :

Մասիսի մէջ լոյս տեսած Ազնաւուրի հաղորդագրութիւնը ցոյց կու տայ, թէ ան որքան խոհեմօրէն կը շարժէր Պոլսոյ պահպանողական շրջանակներու քննադատութիւններուն չենթարկուելու համար: Պոլսահայ համայնքի ազգասէր անդամներու կողմէ, երկու տարի առաջ՝ 1860ին, Հայկական Բարեգործական Ընկերութիւն անունով միութիւն մը հիմնուած էր, որուն նպատակը թէ՛ մայրաքաղաքին, թէ՛ գաւառներու կարօտեալ ընտանիքներուն օգնել էր: Թէ՛ այս ընկերութիւնը, թէ՛ նոյն տարին՝ 1862ին հիմնուած Բաժանորդական Ընկերութիւնը, որուն ծրագիրը գաւառներու պատանիներուն ուսում ջամբել էր, տեղական բնոյթ ունեցող նախաձեռնութիւններ էին<sup>41</sup>: Մինչդեռ Ազնաւուրի կողմէ հիմնուած Հայկ միութիւնը, կեդրոնը Անգլիոյ մէջ գտնուող օտար բարեսիրական կազմակերպութեան մը մասնաճիւղն էր, ինչ որ աւելի մեծ հմայք մը կու տար անոր, Պոլսոյ արեւմտասէր հայ հասարակութեան շրջանակներուն մէջ:

Այդ թուականներուն կը զուգադիպի նաեւ 1862 Օգոստոսի 25-թունի «ապստամբութիւնը», երբ Մարաշի գինուորական կառավարիչ Ազիզ Փաշա՝ առանց իսկ խնդրին լուսաբանութեան համար հարցաքննութեան դիմելու, բազմահազար կանոնաւոր գինուորներով եւ չէրքէզ պաշտպոգութեանով 25-թունի վրայ յարձակում գործեց<sup>42</sup>: 25-թունի իշխանները՝ նախապէս քանի մը հարիւր հոգի զոհ տալէ յետոյ, յաջողեցան ահեղ կռիւէ մը ետք պարտութեան մատնել Ազիզ Փաշայի բանակը: Ազիզ փաշա հազիւ կարողացաւ փախչիլ ճակատամարտի վայրէն:

Կիրանանի մէջ 1860ին մահմետականներու կողմէ քրիստոնեայ արարներու դէմ գործադրուած սպանդին վերջ տալու համար Յրանսայի Նափուլէոն Գ. (1852-70) կայսեր գինուորական ազդու միջամտութենէն քաջալերուած, գէյթունցիները եւս Յրանսայի մօտ դիմում կատարեցին: Նափուլէոն Գ. թէեւ այս անգամ գինուորական միջամտութեան չդիմեց, բայց Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան միջոցաւ, 25-թունի դէմ Ազիզ Փաշայի եւ անոր յաջորդ Աշիր Փաշայի ծրագրած բնաջնջումի գործողութեան արգելք եղաւ: Հետեւաբար Յրանսայի հանդէպ Օսմանեան կայսրութեան հպատակ հայ ժողովուրդի համակրանքը անսահման էր այդ օրերուն:

Մինչ Յրանսա, Արեւելքի քրիստոնեաներու պաշտպանութեան համար օսմանեան կառավարութեան վրայ ճնշում կը բանեցնէր, Պոլսոյ մէջ Անգլիոյ դեսպան Պուլփրը, 25-թունի մէջ տեղի ունեցած դէպքե-

րուն ժամանակ, աւելի համամիտ գտնուեցաւ Բ. Դրան քաղաքակա-  
նութեան: Ան ոչ միայն գէյթունցիներու օգնութեան աղերսանքին  
դրական պատասխան չտուաւ, այլ Ազիզ Փաշային բարեկամ ըլլալով,  
բացայայտօրէն զայն պաշտպանեց, գիտնալով նաեւ, թէ Բ. Դուռը կը  
բաժնէր անոր հայաջինջ ծրագիրը:

Հաւանաբար վերոյիշեալ քաղաքական դէպքերու ընդհանուր զար-  
գացումին հետեւանքով է, որ երբ Ֆրանսայի *Մեծ Արեւելքը* Պոլսոյ մէջ  
նոր օթեակ մը հիմնեց, քաղաքին հայ համայնքի կարգ մը երեւելի  
դէմքեր, անմիջապէս անոր ընծայուեցան: Արդարեւ, որպէս Արեւելքի  
քրիստոնեայ ժողովուրդներու պաշտպան եւ ազատամիտ պետութիւն,  
Ֆրանսայի ազդեցութիւնը այդ պատմական օրերու քաղաքական դէպ-  
քերու հոլովոյթին պատճառաւ, Պոլսոյ մէջ իր գազաթնակէտին հա-  
սած էր: Քիչ չէին անոնք, որոնք կը յուսային Արեւմտահայաստանի  
հարցը մօտալուտ ապագային Ֆրանսայի ազդու միջամտութեան շնոր-  
հիւ լուծուած տեսնել: Ֆրանսայի ամենաերեւելի ազատ-որմնադիրնե-  
րը մի<sup>թէ</sup> յունական դատին հանդէպ խոր համակրանք մը ցոյց չէին  
տուած<sup>43</sup>: Զէյթունի «ապաստամբութեան» խնդրի ամէնէն հրատապ  
այս շրջանին, 1882ի աշնան, Պոլսոյ մէջ կը հիմնուէր նոր օթեակ մը,  
Ֆրանսայի *Մեծ Արեւելքի* հովանաւորութեան տակ, որ թէեւ սկիզբը  
մեծ յոյսեր կը ներշնչէր, բայց գիտաւոր աստղի մը նման կարճատեւ  
կեանք մը ունենալով, տասնեակ մը տարիներ յետոյ պիտի անհետա-  
նար: Այս օթեակը *Արեւելքի Միութիւն* (Union d'Orient) օթեակն է:

Պոլսոյ մէջ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան  
տարածումին ամենակարեւոր եւ հական դերը վստահաբար Ֆրանսա-  
յի *Մեծ Արեւելքին* ենթակայ, 23 Հոկտեմբեր 1882ին հիմնուած այս  
օթեակին կը վիճակուի, որուն բացման պաշտօնական արարողու-  
թիւնը տեղի ունեցաւ 23 Մարտ 1883ին: Այս օթեակը կը հիմնուէր  
զանազան ասպարէզի տէր քանի մը անձերու նախաձեռնութեամբ,  
բայց գաղափարը յղացած էին Փարիզի *Մեծ Արեւելքի* եղբայրներ  
Տոքթ. Ալեքսանտր Եինաս եւ տպարանատէր Մօիզ տը Քասթրօ: Միւս  
հիմնադիր անդամներն են առեւտրական Սալոմոն Տէլ Փօրթօ, դրա-  
մատան պաշտօնեայ հմմանուէլ Ծ. Վենեցիանի, լուսանկարիչ Ժան-  
Պաթիսթ Տըրէն եւ դեզագործ հտուար Օթթոնի<sup>44</sup>: Այս նախաձեռնու-  
թեան քանի մը շարաթ յետոյ կը միանար նաեւ Ազնաւուր: Մինչ Վոս-  
փորի Աստղ օթեակը սկզբնական շրջանին կը նախընտրէր իր անդամ-  
ները առնուազն մայրաքաղաքի Ֆրանսացի համայնքէն ունենալ, *Արե-  
ւելքի Միութիւնը* առաջին մէկ օրէն իսկ, նպատակադրեց նոյն տանի-  
քին տակ հաւաքել Պոլսոյ այլազան համայնքներու ծանօթ դէմքերը:  
Ազատ-որմնադրութեան սկզբունքը մի<sup>թէ</sup> չէ<sup>45</sup> յորդորեր առանց ցեղի,  
կրօնքի եւ դաւանանքի խտրութեան բոլոր ազգութիւններու միջեւ

Համերաշխ գործակցութիւն մը ապահովել, յանուն մարդկութեան յառաջդիմութեան եւ բարօրութեան: Հետեւաբար այս օթեակին կոչը առաջին մէկ օրէն իսկ արտակարգ ընդունելութիւն գտաւ Պոլսոյ քոզմոփոլիթ շրջանակներուն մօտ: Արեւելքի Միութիւն օթեակի առաջին նախագահ ընտրուեցաւ «եղբայր» Շինաս:

Օթեակի բացման արարողութեան առթիւ Տոքթ. Շինասի արտասանած ճառը խիստ յատկանշական է անով, որ բացայայտ կերպով կը ցոլացնէ մինչեւ ԺԹ. դարու կէսը, Պոլսոյ մէջ օսմանահպատակ այլազան ժողովուրդներու դարերու ընթացքին իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն իսկական պատկերը, երբ ան կը յայտարարէ. «Երկրի մը մէջ ուր զանազան ցեղերը որ կը բնակին, անոնք մինչեւ հիմա մի միայն գիրար ատեցին, հալածեցին: Երկրի մը մէջ ուր քաղաքացիական եւ կրօնական օրէնքները, զանազան միաբանութիւնները, միութիւնները դարերու ընթացքին փոխանակ զանոնք՝ ժողովուրդները, գիրար մօտեցնելու, ինչ որ պարտ էին ընել, զանոնք իրարմէ աւելի հեռացուցին:

«Ընկերութիւնը քայքայող այս վիճակին վերջ մը տալու միակ դարմանը օթեակի մը հիմնումն էր որուն միակ նպատակը պիտի ըլլայ այս ցեղերուն իրական միացումը որպէսզի անոնք գիրար սիրեն եւ յարգեն ազատ-որմնադրութեան դրօշակը բարձր պահելով»<sup>45</sup>:

Արեւելքի Միութիւն օթեակի բացումին ներկայ եղան նաեւ հինգ հայ «եղբայր»ներ, որոնք մինչ այդ օթեակին միացած եւ կամ անկէ իրենց ընծայումը ստացած էին: Ասոնք են Յովհաննէս Խուրտաճեան, Մրապիոն Հէքիմեան, զմիւռնահայ վաճառական Գալուստ Էքիզեան, Յարէթիկ Նէվրուզեան եւ Միքայէլ Ալիշան: Այս օթեակը մինչեւ տարուան վերջը արդէն ունէր 34 անդամներ<sup>46</sup>:

29 Դեկտեմբեր 1863ին կատարուած նոր ընտրութեամբ, Տոքթ. Շինասի յաջորդեց Ազնաուր, որ արդէն բազմաթիւ օթեակներու մէջ երկար տարիներէ ի վեր խիստ յարգուած ազատ-որմնադիր մըն էր: Ազնաուր նախագահութեան իր երդումը ըրաւ 14 Յունուար 1864ին: Ան խոստացաւ իր կարելին ընել լաւագոյնս ծառայելու համար ազատ-որմնադրութեան սկզբունքներուն տարածումին: Իր մէկ տարուան նախագահութեան շրջանին Արեւելքի Միութիւն օթեակը մեծ յառաջդիմութիւն արձանագրեց: Անդամներու թիւը 65ի բարձրացաւ, որոնց 17ը Պոլսոյ հայ համայնքին պատկանող զանազան ասպարէզի տէր «եղբայր»ներ էին<sup>47</sup>: Այս անդամներէն ոմանք իրենց ընծայումը ուղղակի Արեւելքի Միութիւն օթեակէն ստացան, մինչ ուրիշներ տարբեր օթեակներէ միացան անոր:

Պուրվոր, որ պոլսահայ համայնքի ընտրանիին, ինչպէս նաեւ ժողովուրդին մօտ զգացած էր Ծրանսայի նկատմամբ հետզհետէ աւելցող

Համակրանք մը՝ ի տես Չէյթունի տազնապին առնչութեամբ վերջինիս վարած Հայանպաստ քաղաքականութեան, Հայ ժողովուրդի վստահութիւնը շահելու Համար առիթի մը կը սպասէր: Առաջին առիթը ներկայացաւ 1883ի ձմրան, երբ անգլիական Արեւելքի Աստղ (Star of the East) եւ Հայկական Հայկ միութիւնները որոշեցին իրենց Հիմնադրման առաջին տարեդարձը միասնաբար տօնել: Ազնաւուր՝ իրր Հիմնադիր Հայկ միութեան եւ փոխ-նախագահ Արեւելքի Աստղի, Պուլվրրի գրեց հետեւեալ նամակը.

Նորին Գերագանցութիւն

Բարձրապատիւ Սրբ Հ. Լ. Պուլվրր

Թող Ձերդ Գերագանցութիւնը բարեհաճի արտօնել ներքոստորագրեալիս, ամենայն յարգանքով տեղեկացնելու թէ այս քաղաքին մէջ նորերս ստեղծուած Արեւելքի Աստղ եւ Հայկ (Օրիոն) օթեակներու Օտտ Տէյլօզ եղբայրները, Բերայի Հայկական Թատրոնին մէջ՝ յօգուտ տեղական բարեսիրական կազմակերպութիւններու իրենց տարեկան պարահանդէսին Համար բոլոր անհրաժեշտ կարգադրութիւնները ամբողջացնելէ ետք, միասնաբար նշանակած են պատուիրակութիւն մը, որ Ձեր ազնիւ թոյլտուութեամբ այցելէ Ձերդ Գերագանցութեան եւ Ձեզի ներկայացնէ կանոնագիրքն եւ իր յարգանաց Հաւաստիքը՝ յանուն զոյգ օթեակներուն:

Կ'ակնկալեմ, որ Ձերդ Գերագանցութիւնը՝ իրեն յատուկ ազնուութեամբ հովանաւորելով բարեսիրական Հաստատութիւնները, պիտի հաճի արտօնել սոյն պատուիրակութեան այցելել իրեն՝ կատարելու յանուն միաբանութեան, իրենց հաճելի պարտականութիւնը եւ միաժամանակ ուրախ պիտի ըլլայ Հաղորդելու ներքոստորագրեալիս թէ ո՛ր օրն ու ո՛ր ժամը Ձերդ Գերագանցութեան Համար ամենայարմարը պիտի ըլլան սոյն (պատուիրակութիւնը - Ա.Պ.) ընդունելու Համար:

Պատիւն ունիմ մնալու

Ձերդ Գերագանցութեան

եղբայրական

եւ ամենախոնարհ ծառան

Ս. Ազնաւուր

Ա.Վ. Արեւելքի Աստղ օթեակի  
եւ Գ.Վ. Հայկ (Օրիոն) օթեակի<sup>18</sup>

Կ.Պոլիս, 5 Փետր. 1883

Բերա, 13 Սիրա Սելվի

Թաքսիմի դիմաց

Պուլվրր, որ առաջին մէկ օրէն իսկ ազատ-որմնադիրներու օթեակները Պոլսոյ անգլիական դեսպանատան Հակակշռին տակ առած էր եւ

կը նախագահէր անոնց տարեկան աւանդական պարահանդէսներուն, ի հարկին դեսպանատան սրահները երբեմն այդ հանդիսութիւններուն տրամադրելով, Ազնաւուրի կողմէ ներկայացուած խնդրանքը ջերմօրէն ընդունեցաւ եւ խոստացաւ անգլօ-հայկական պատուիրակութիւնը շարաթ մը յետոյ պաշտօնապէս ընդունիլ:

Խրիմի պատերազմի վաղորդայնի այդ պատմական օրերուն, Ազգային կանոնագրի կամ Սահմանադրութեան վաւերացումը կ'իրականանար շնորհիւ Պուլվրրի վարած ճկուն դիւանագիտութեան: Ազգային կանոնագիրը՝ Բ. Դրան պահանջին վրայ, Պատրիարքարանի կողմէ վերանայուած ըլլալով, կրկին կառավարութեան յղուած էր: Բայց ամիսներէ ի վեր Բ. Դուռը անպատասխան թողուցած էր զայն: Պուլվրր, որ Զէյթունի հարցին նկատմամբ Ֆրանսայի ցոյց տուած մարդասէր եւ աշխոյժ քաղաքականութեան մօտէն կը հետեւէր, ուզեց Բ. Դրան մօտ ճարպիկ միջամտութեամբ մը թէ՛ Պոլսոյ հայ աւագանին սիրաշահիլ, եւ թէ՛ զանոնք օսմանեան կառավարութեան հանդէպ երախտապարտ ձգելով, Ֆրանսայի ազդեցութիւնը տկարացնել: Արդարեւ, Պուլվրրի խորհուրդին անսալով է, որ Բ. Դուռը Ազգային կանոնագիրը 17 (նոր տոմարով՝ 29) Մարտ 1863ին, յանկարծ, ի մեծ ուրախութիւն պոլսահայոց, Ալի Փաշայի կողմէ վաւերացուած՝ Պատրիարքարան վերադարձուց<sup>49</sup>:

Պուլվրրի այս միջամտութիւնը, որ բոլոր օսմանահպատակ հայերը Ազգային Սահմանադրութիւնով մը կ'օժտէր, անշուշտ արտակարգ խանդավառութիւն մը ստեղծեց մանաւանդ Պոլսոյ հայ համայնքի յառաջդիմական, արեւմտասէր շրջանակներուն մօտ:

Հետեւաբար, դժուար չէ կռահել, թէ Պոլսոյ մէջ երկու գլխաւոր ազգային հոսանքներ կը գործէին: Անոնք՝ որոնք իրենց ուսումը Ֆրանսա առած, Ֆրանսական յեղափոխութեան ականատես, անոր ազատամիտ սկզբունքներուն նախապատուութիւն կու տային, եւ անոնք՝ որոնք պահպանողական եւ աւանդապաշտ Անգլիոյ յառած էին իրենց ակնարկները, ու կը յուսային անոր օգնութեամբ օր մը Հայաստանի վերածնունդը տեսնել:

1860ականներու սկիզբը, Ֆրանսայի Մեծ Արեւելքի օթեակներուն մէջ Աստուծոյ գոյութեան եւ հոգիի անմահութեան շուրջ վիճարանութիւններ ու գաղափարի փոխանակումներ տեղի կ'ունենային, բայց դեռ որոշ ուղեգիծ մը չէր որդեգրուած, հետեւաբար Անգլիոյ Մեծ Օթեակին հետ խզումը դեռ չէր առաջացած: Այսուհանդերձ, այս երկու մեծ օթեակներուն միջեւ որոշ ցրտութիւն մը արդէն զգայի էր: Ազնաւուր, որ Պոլսոյ անգլիական օթեակներու կանոնագրի սկզբունքներուն հաւատարիմ էր, Ֆրանսայի Մեծ Արեւելքի հոփանաւորութեան տակ գտնուող եւ խիստ գործօն Արեւելքի Միութիւն օթեա-

կին ալ նախագահը ըլլալու իր հանգամանքով, դժուար չէ գուշակել թէ որքան մեծ վարկ կը վայելէր Պոլսոյ ազատ-որմնադիրներու շրջանակներուն մօտ: Նամանաւանդ, իր օրով է, որ Իտալիոյ Մեծ Արեւելքը Պոլսոյ մէջ հիմնեց Իտալիա (Italia) օթեակը, որուն հիմնադիրներու ցանկին վրայ կը տեսնենք նաեւ Ազնաւուրի անունը<sup>50</sup>:

27 Ապրիլ 1864ին է, որ Պուլվրրի նախաձեռնութեամբ - եւ հաւանարար Ազնաւուրի թելադրանքով - եօթ անգլիացի «եղբայր»ներ Չմիւռնիոյ մէջ հայկական օթեակ մը հիմնելու համար Անգլիոյ Մեծ Օթեակին խնդրագիր ներկայացուցին: Անգլիոյ Մեծ Օթեակը դրական կերպով ընդառաջեց այս խնդրանքին, եւ Օսմանեան կայսրութեան մէջ ծնունդ առաւ հայկական առաջին օթեակը: Թիւ 1014 այս օթեակը *Տրգրան* (Dekran) անունը կը կրէր: Անոր պաշտօնական բացումը կատարուեցաւ 12 Օգոստոս 1864ին: Ան թէեւ պաշտօնապէս մինչեւ 6 Յունիս 1864 գոյատեւեց, բայց Օգոստոս 1876էն յետոյ թուրք ոստիկանութեան տեւական հալածանքին ենթակայ ըլլալով, արդէն անշարժութեան մատնուած էր: *Տրգրան* օթեակը թէեւ իրրեւ հայկական օթեակ կը ճանչցուի, բայց իր կարճատեւ գոյութեան ընթացքին ունեցաւ նաեւ 7 թուրք եւ 3 յոյն «եղբայր»ներ, ինչ որ կը փաստէ թէ միմիայն Հայոց չէր վերապահուած: Իր 108 հայ անդամներուն մէջ կը տեսնենք Չմիւռնիոյ հայ գաղութին ծանօթ դէմքեր, ինչպէս *Արեւելեան Մամուլ* ամսաթերթի արտօնատէր-տնօրէն Մատթէոս Մամուրեան, թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրեան, *Արշայոյս Արարատեան* շաբաթաթերթի խմբագիր Ղուկաս Պալթագարեան, տպարանատէր Յարութիւն Տէտէեան, բառարանագէտ Մեսրոպ Նուպարեան, իրաւաբան Յարութիւն Ահարոնեան, Տոթթ. Պետրոս Թիւրապեան եւլն<sup>51</sup>:

Վերոյիշեալ օթեակներէն զատ, Պուլվրրի նախաձեռնութեամբ, Պոլսոյ եւ Չմիւռնիոյ մէջ հիմնուեցան նաեւ քանի մը ուրիշ օթեակներ եւս: Պուլվրր չվարանեցաւ նաեւ քաղաքի յոյն համայնքին համար եւս օթեակ մը հիմնել, *Առաքինութիւն* (Arcela) անունով, 1864ի վերջերը: Նոյն ատեն, Ազնաւուր, ընդառաջելով պոլսաբնակ քանի մը ծագումով իրլանտացի եղբայրներու փափաքին, անձամբ միջամտեց իրլանտայի Մեծ Օթեակի Գերագոյն Խորհուրդի մօտ, որպէսզի Պոլսոյ մէջ օթեակ մը հիմնուի: Այդ առթիւ պատրաստուած խնդրագիրը ստորագրուած է Ազնաւուրի եւ պոլսաբնակ, *Արեւելեան Օթեակի* անդամ 15 անգլիացիներու եւ իրլանտացիներու կողմէ<sup>52</sup>: Իրլանտայի Մեծ Օթեակի հովանաւորութեան տակ հիմնուած այս օթեակը կը կրէր 188 թիւը, եւ կը կոչուէր *Լինսթէր* (Leinster), ի յարգանս իրլանտայի Մեծ Օթեակի նախագահ դուքս տը Լինսթէրի (1791-1874), որ իրլանտայի ամենամեծ հողատէրերէն մին էր: Այս օթեակը հիմնուեցաւ Վոսիորի եւրոպական ասիին՝ Պիւլիւքտէրէ կոչուած գիւղը:

1864ի ամրան Ֆրանսայի ազդեցութիւնը Պոլսոյ մէջ զօրացնելու համար, մասնաւոր առաքելութեամբ մը օսմանեան մայրաքաղաք կը հասնէր Ֆրանսայի Մեծ Արեւելքի Գերագոյն Խորհուրդի անդամ Լուի Ամիալլ: Հազիւ 27 տարեկան, այս երիտասարդ իրաւագէտը իր համարձակ եւ փառասէր նկարագրով շուտով գրաւեց Պոլսոյ ազատորմնադիրներու շրջանակներուն ուշադրութիւնը, եւ նոյն տարուան Դեկտեմբերի վերջը տեղի ունեցող Արեւելքի Միութիւն օթեակի նախագահական ընտրութիւններուն թեկնածու ներկայացաւ: Ազնաւուր, որ նախապէս մտադիր չէր իր թեկնածութիւնը վերստին ներկայացնելու, կրկին դրաւ իր թեկնածութիւնը: Քուէներու շատ քիչ տարբերութեամբ Ամիալլ ընտրուեցաւ նախագահ: Ազնաւուր, Ֆրանսայի Մեծ Արեւելքի Գերագոյն Խորհուրդին ուղարկած նամակով մը կը յայտնէր, թէ քուէարկութեան մասնակից անդամները մեծամասնութեամբ իրեն ի նպաստ քուէարկած էին, բայց ինք իր թեկնածութիւնը յետոյ ետ առած ըլլալով է, որ Ամիալլ նախագահ ընտրուած էր<sup>53</sup>: Արեւելքի Միութիւն օթեակի «եղբայր»ները, հիմնադիր եղբայր Տոքթ. Շինասը եւ Ազնաւուրը ընտրեցին պատուակալ նախագահ, առ ի երախտագիտութիւն ազատ-որմնադրական գաղափարաբանութեան տարածման համար անոնց կատարած գործունէութիւններուն<sup>54</sup>:

Այսուհետեւ, Ամիալլ չորս տարի յաջորդաբար նախագահ ընտրուեցաւ: Խիստ նախաձեռնող ու հնարամիտ, ան ջանաց այս օթեակին մէջ մէկտեղել նաեւ մայրաքաղաքին շարք մը մահմետական մտաւորական, պաշտօնեայ կամ զինուորական երեւելի անձնաւորութիւնները: Ամիալլի նախագահութեան շրջանին է, որ այս օթեակին յարեցան նշանաւոր հրապարակախօս Նամըք Քէմալ, իշխան Մուսթաֆա Ֆազլլ՝ Եգիպտոսի փոխարքային եղբայրը, առեւտրական դատարանի չորս դատաւորներ, բարձրաստիճան քանի մը զինուորականներ, որոնց կարգին նաեւ՝ Ջէյթուլի 1862ի սպանդը կազմակերպած Մարաշի նախկին զինուորական կառավարիչ եւ յետոյ հանգստեան կոչուած զօրավար՝ Ահմէտ Ազիզ Փաշան (27 Մարտ 1866ին), եւլն.:

Արեւելքի Միութիւն օթեակը, Ամիալլի նախագահութեան շրջանին թէեւ մեծ գործունէութիւն մը արձանագրեց, բայց անոր եւ ուրիշ քանի մը «եղբայր»ներու կողմէ Աստուծոյ գոյութիւնը խնդրոյ առարկայ ընող յայտարարութիւնները պատճառ եղան, որ Պոլսոյ Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ գտնուող միւս օթեակներուն հետ իր կապերը հետզհետէ սկսին թուլնալ: Ամիալլի յաջորդող Գերյարգելի Վարպետ Նիքոլա Պորտէանօ (Nicolas Bordéano) եւ մանաւանդ լեհ հանրային ճարտարագէտ, Կոմս Սթանիսլաս Տը Ռոշեթէն (Comte Stanislas de Rochetin) չկրցան նոյն ճարտարութեամբ եւ

նրբամտութեամբ այս այլազան համայնքներու անդամներէն բաղկացած քոզմոփոլիթ օթեակին գործունէութիւնը շարունակել, որ ի վերջոյ 1874ի սկիզբը «քունի մէջ մտաւ» եւ յետոյ ալ դադրեցաւ գործել<sup>55</sup> :

Արիմի պատերազմէն յետոյ Պոլսոյ եւ Չմիւռնիոյ մէջ հիմնուած վերոյիշեալ գրեթէ բոլոր օթեակներուն մէջ, ինչպէս վերել ըսինք, հայ «եղբայրներու անուններուն կարելի է հանդիպիլ: Յատկապէս ոչ իսլամ օսմանեան հպատակներու մօտ ազատ-որմնադրութեան գտած այս ջերմ ընդունելութիւնը ունէր իր պատճառները: Օսմանեան Տէրութիւնը, Հաթթ-ը Հիւմայիւնի հրովարտակով, իր բոլոր հպատակներուն չէ՞ր վստահեցներ, թէ այսուհետեւ աւելի քան հինգ դարերէ իր վեր գոյութիւն ունեցող ընկերային անհաւասարութեան օրէնքները կը ջնջուէին, եւ առանց կրօնքի ու ցեղի խտրութեան, իր բոլոր հպատակները պիտի վայելէին նոյն իրաւունքները: Պոլսոյ եւ Չմիւռնիոյ հայ համայնքներու մտաւորականներէն եւ հրապարակի ծանօթ դէմքերէն ոմանք, որ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութիւնը ջերմօրէն ողջունած էին, կը յուսային «Տիեզերքի մարդկութեան եղբայրութեան եւ համերաշխ գործակցութեան» հաւատացող եւրոպացի յառաջդիմական ու ազատամիտ տարրերուն հիմնած ազատ-որմնադիրներու միջազգային մեծ ընտանիքին մաս կազմելով, հայ ազգին բարոյական թէ մտաւոր զարգացումին սատարած ըլլալ: ԺԹ. դարուն պոլսահայ համայնքին մէջ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան գտած ջերմ ընդունելութեան յատկացուած իր յօդուածաշարքին մէջ Ռուբէն Բերբերեան դիտել կուտայ, թէ հայ ազատ-որմնադիրները ազգային նպատակ մը կը հետապնդէին: Նոյն վսեմ սկզբունքներուն շուրջ օթեակներ հիմնելով, անոնք կը յուսային ազգին մէջ տարիներէ ի վեր համայնքը բաժնող կրօնական վէճերուն պատճառաւ ժողովուրդին մէջ տիրող անհամաձայնութեան եւ թշնամանքին վերջ տալ, ազգին մտաւոր զարգացման օգնել եւ կղերին ու ամիրաներու կամայականութիւնից ազատել»<sup>56</sup> : Արդարեւ, կ'աւելցնէ Բերբերեան, «Եւրոպայի թէ՛ մօտալուտ անցեալը եւ թէ՛ ժամանակակից քաղաքական դէպքերը ցոյց էին տալիս նրանց, որ մի շարք քաղաքական յեղաշրջումներ կատարուեմ էին մասօնութեան օգնութեամբ: ... Մի տեսակ հմայք էր, որ մի շարք գիտնականներ ու սիրուած զրագէտներ մասօններ էին՝ Վօլթէւր, Քոնստոսէն, մեծ յեղափոխականներ՝ Դանդօնը, Միուարօն, հունգարական ազատագրական յեղափոխութեան պարագլուխ Քօշուիթը, լեհացի ազգային գործիչ Չառթօ-Ռիթշակին»<sup>57</sup> :

Չմիւռնիոյ Տիգրան օթեակը այդ պատմական օրերու արգասիքն է, բայց նոյն նախաձեռնութիւնը Պոլսոյ մէջ երկու տարի յետոյ կարելի եղաւ իրականացնել: Պոլսոյ հայ համայնքը հոս եւս Ազնաւուրի կը

պարտի այդ նախաձեռնութիւնը<sup>58</sup>: Արեւելքի Միութիւնն օթեակի հիմնումին յաջորդող երկու տարիներու ընթացքին տեսանք, թէ որքան ջերմ ընդունելութեան արժանացած էր Յրանսայի Մեծ Արեւելքի ենթակայ այս օթեակը: Ի տես այս յաջողութեան, Պուլվրը Չմիւռնիոյ Հայ Համայնքի ծանօթ դէմքերը հաւաքելու մտօք, անգլիացի ազատ-որմնադիրներու մասնակցութեամբ Տիգրան օթեակը հիմնած էր: Պոլսոյ Հայ ազատ-որմնադիրները, որոնք անգլիական, Փրանսական եւ իտալական օթեակներու ընծայուած էին, սկսան հարց տալ, թէ կարելի չէ՞ր արդեօք, որ իրենք եւս մայրաքաղաքին մէջ՝ Հայ Համայնքին համար, օթեակի մը հիմնադրութեան նախաձեռնութիւնը առնէին: Եւրոպական մեծ օթեակի մը հովանաւորութիւնը վայելող նման օթեակ մը, նախ այդ տէրութեան դեսպանատան պաշտպանութեան առարկան ըլլալով, Բ. Դրան ուղղակի հակակշռին ենթակայ չէր ըլլար, յետոյ՝ այդ առանձնաշնորհեալ վիճակէն օգտուելով, Հայկական օթեակի «եղբայր»ները անարգել կրնային իրենց ժողովուրդին մտաւոր յառաջդիմութեան եւ տնտեսական զարգացումին ծառայող ծրագիրներ մշակել եւ զանոնք իրականացնել: Բայց հարց էր, թէ ո՞ր տէրութեան օթեակի հովանաւորութիւնը պիտի ըլլար լաւագոյն ընտրութիւնը:

Հայ «եղբայր»ները կը թուի թէ խորապէս տպաւորուած էին Արեւելքի Միութիւնն օթեակի նախագահ Ամիապլէն, որ առաջին մէկ օրէն իսկ, ոչ միայն քաջալերած էր մահմետականներու ընծայումը այդ օթեակին մէջ, այլ մանաւանդ, նկատի առնելով անոնցմէ շատերուն օտար լեզուի անծանօթ ըլլալու պարագան, որու պատճառաւ ալ անոնք հեռու կը մնային ազատ-որմնադիրներու գաղափարաբանութեան լոյսէն, մտադրած էր հիմնել օթեակ մը, ուր ժողովները թրքերէնով տեղի պիտի ունենային:

Ստորեւ թարգմանաբար կը ներկայացնենք Յրանսայի Մեծ Արեւելքի դիւաններուն մէջ պահուած առաջին ժողովի ատենագրութիւնը, որ լաւագոյնս կը պատկերացնէ Պոլսոյ Հայկական Մէր օթեակի հիմնադիր առաջնորդներուն համոզումը:

Ատենագրութիւն Մէր օթեակի 10/22 Փետրուար 1888ի նախապատրաստական նիստի, Ասմայի-Մեսճիթ փողոց թիւ 32 մասոնական տաճարին մէջ, Բերա, Կոստանդնուպոլիս:

Ներկաներ. Ս. Ազնաւուր, Մ. Ալիշան, Յ. Նէվրուզեան, Մ. Միւհնտիսեան, Պ. Գամայիկ, Բարունակ Պէյ Ֆէրուխան, Յովսէփ Իսկենտէրեան, Յ. Սարաֆեան:

Երեք անդամներ համաձայնած են Խտալիոյ Մեծ Արեւելքին հետ՝ տեղի կապակցութեամբ: Հարց դրուեցաւ թէ աշխատանքներն հայերէնով, թէ՞ թրքերէնով տեղի պիտի ունենան: Եղբայր Բարունակ Պէյ բացատրեց, թէ որքան նախընտրելի եւ բնական պիտի ըլլար որդեգրել հայերէնը, նկատի առնելով, որ (արդէն - Ա.Պ.) առաջարկուած էր շուտով ստեղծել թրքախօս օթեակ մը: Եղբայր Գամալիկ (եւս - Ա.Պ.) պաշտպանած ըլլալով նոյն կարծիքը, անիկա դրուեցաւ քուէարկութեան եւ միաձայնութեամբ որդեգրուեցաւ՝ միակ դէմով մը, որ աշխատանքներն ու ատենագրութիւնները պիտի ըլլան հայերէնով, այն պայմանով, որ դիւրութեամբ հայերէն խօսիլ չկարողացող եղբայրները իրաւունք ունենան թրքերէնով արտայայտուելու:

Ապա քննարկուեցաւ (այն հարցը - Ա.Պ.) թէ, օթեակը պէտք է ենթարկուէր Ֆրանսայի Մեծ Արեւելքին, թէ՞ Ֆրանսայի մէջ սկովտիական ծէսի Գերագոյն Խորհուրդին: Ներկայ եղբայրները իրենց անհատական կարծիքները յայտնելէ ետք, (հարցը - Ա.Պ.) դրուեցաւ քուէարկութեան, եւ միաձայնութեամբ որոշուեցաւ Ֆրանսայի Մեծ Արեւելքէն պահանջել սկովտիական ծէսի սահմանադրութիւնը<sup>59</sup>:

Այս կերպով, Մէր օթեակի հիմնադիրները հաւանաբար կը յուսային թէ՛ Ֆրանսական Մեծ Արեւելքի եւ թէ՛ անգլօ-սաքսոն ազատ-որմնադիրներու բարոյական հովանաւորութիւնը վայելած ըլլալ: Որոշուեցաւ նաեւ Խտալիա օթեակի սրահը վարձել իրը հաւաքավայր, 3000 դրուշ տարեկան վարձքով, ներառեալ լուսաւորութեան եւ ջեռուցումի ծախքը<sup>60</sup>:

Ազնաւուր իր 28 Փետրուար 1886 թուակիր նամակով Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդին կը յիշեցնէր, թէ Անգլիոյ Մեծ Օթեակի հովանիին տակ գտնուող Պոլսոյ մէջ հիմնուած օթեակի մը, ինչպէս նաեւ Արեւելքի Միութիւն օթեակին նախագահութիւնը վարած էր, եւ կը տեղեկացնէր, թէ իր «հայրենակիցները անհամբեր են շուտով աշխատութեան սկսելու, հետեւաբար կը սպասեն սահմանադրութեան եւ արարողութիւններու ընթացքին անհրաժեշտ իրերուն»<sup>61</sup>: Սոյն նամակէն կը տեղեկանանք նաեւ, թէ որեւէ յապաղում կանխելու համար, Ազնաւուր փարիզարնակ «եղբայր» Տէյ Փորթոյի միջոցաւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի կեդրոնին փոխանցած էր զանազան ծախքերու համար անհրաժեշտ գումարը: Ազնաւուրի սոյն նամակէն կ'իմանանք նաեւ, որ Մէր օթեակի յառաջիկայ վեց ամիսներու ժողովները տեղի պիտի ունենային իւրաքանչիւր ամսու երկրորդ եւ չորրորդ Հինգշաբթի օրերը<sup>62</sup>:

Ազնաւուր իր նամակին կը կցէր նաեւ Մէր օթեակի Հիմնադիրներու ցուցակը - երկու օրինակ - զոր լրիւ կը հրատարակենք իբրեւ «Յաւելուած Ա»<sup>63</sup>։ Ինչպէս այդ ցուցակին մէջ կը տեսնուի, Հիմնադիր «եղբայր»ներուն հը Անգլիոյ Մեծ Օթեակին, 2ը՝ Իտալիոյ Մեծ Արեւելքին ենթակայ Պոլսոյ Իտալիա օթեակին եւ 12ը՝ Ֆրանսայի Մեծ Արեւելքին ենթակայ Պոլսոյ Արեւելքի Միութիւն օթեակին ընծայուած ազատ-որմնադիրներէն են։

Բերբերեանի յօդուածը, որ Պոլսոյ մէջ գործած հայ ազատ-որմնադիրներու պատմութիւնը ուսումնասիրողներուն կողմէ յաճախ իբր գլխաւոր աղբիւր կ'օգտագործուի, Մէր օթեակի Հիմնադիրներուն մէջ կը յիշէ Սերովբէ Թազուրեանի եւ Մեղու պարբերաթերթի խմբագիր Յարութիւն Սվաճեանի անունները<sup>64</sup>։ Մեր պրպտումներու ընթացքին վերոյիշեալ անձերուն Մէր օթեակի անդամ ըլլալը հաստատող ոչ մէկ փաստ կրցանք գտնել։ Մեզի ծանօթ է, թէ Թազուրեան Անգլիոյ Մեծ Օթեակի հովանիին տակ գտնուող Արեւելեան օթեակի ընծայուած էր։ Գալով Սվաճեանի, անոր անուան չհանդիպեցանք բնաւ մեր տեսած գրեթէ բոլոր Պոլսոյ օթեակներու ցուցակներուն մէջ։ Մեր համոզումով, Սվաճեան, եթէ ազատ-որմնադիր էր, ինչ որ անհաւանական չէ, ընծայուած ըլլալու է Իտալիա օթեակին, քանի որ, այդ օթեակի ցուցակն է միայն, որ չկարողացանք ստուգել։

Մէր օթեակի Հիմնումին առթիւ Ազնաւուրի ուղարկած դիմումագիրը դեռ Ֆրանսական Մեծ Արեւելքը չէր ստացած, երբ քանի մը օր յետոյ՝ 2 Մարտ 1886 թուակիր երկրորդ գրութեամբ մը, ան կը տեղեկացնէր, թէ Պոլսոյ հայ համայնքի զանազան ասպարէզի պատկանող ծանօթ դէմքերէն ութ «եղբայր»ներ՝ Աւետիս Քօլօլեան, Ներսէս Պէյ Տատեան, Տոքթ. Ե. Շիշմանեան, Յարէթիկ Նէվրուզ, Վարդան Փափագեան, Մկրտիչ Փիշմիշ, Գրիգոր Խուրտաճեան եւ Գալուստ էքիզեան փափաք յայտնած են Մէր օթեակի Հիմնադիրներու շարքին միանալ։ Բոլոր ասոնք, Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանիին տակ գտնուող Արեւելքի Միութիւն օթեակի անդամներէն ըլլալով, Մէր օթեակի Հիմնադիրներու նախաձեռնութեան անոնց մասնակցութիւնը բնականաբար հայկական օթեակի Հիմնումին համար կատարուած դիմումին նպաստաւոր ազդեցութիւն մը կրնար ունենալ։

Երբ Մեծ Արեւելքի վարչութեան պատասխանը ուշացաւ, այս անգամ Մէր օթեակի նորընտիր վարչական կազմի անդամները հաւաքական խնդրագիր մը ուղարկեցին Փարիզ, ուր ի միջի այլոց կը գրէին. «Ձեր նոր Սահմանադրութեան կանոնագրէն ռեւէ օրինակ մը չունենալով կ'անգիտանանք պատշաճ ձեւակերպութիւնները որ պէտք է կատարուին նոր օթեակ մը հիմնելու համար։ Այսուհանդերձ կը յուսանք որ մեր խնդրանքը դրական կերպով պիտի դիմաւորէք։

«Կը խոստանանք Մեծ Արեւելքի կանոններուն հաւատարիմ եւ ճշգրիտ թարգմանութիւնը կատարել եւ հանդիսաւորապէս կ'երդնունք հաւատարիմ մնալ Ֆրանսայի Մեծ Արեւելքի սկզբունքներուն»<sup>65</sup> :

Մինչ այդ՝ սոյն նամակին Ֆրանսայի Մեծ Արեւելքի կեդրոնը ժամանումէն երկու օր առաջ արդէն, 7 Մայիս 1888ին, Մէր օթեակի հիմնադիրներու դիմումնագիրը Բարձրագոյն Խորհուրդի ժողովի օրակարգին վրայ կը գտնուէր: Նկատի առնելով, որ Մէր օթեակի հիմնադիրները անհրաժեշտ բոլոր պայմանները կը լրացնէին, Բարձրագոյն Խորհուրդը տուաւ պատշաճ արտօնութիւնը, որպէսզի Մէր օթեակը հիմնուի, որուն արարողութիւնները սկսովտիական ծէսով, իսկ ժողովները հայերէնով տեղի պիտի ունենան<sup>66</sup> :

Մէր օթեակը դեռ իր պաշտօնական բացումը չէր կատարած, երբ Արեւելքի Միութիւն օթեակի նախագահ Ամիապլ, ամսական ժողովի մը ընթացքին՝ 12 Յունիս 1888ին, խստիւ ուրացաւ Տիեզերքի Մեծ Ճարտարապետին՝ Աստուծոյ գոյութիւնը: Ան կ'ըսէր, թէ «Աստուած գոյութիւն չունի, երբեք ալ գոյութիւն չէ ունեցած եւ նոյնիսկ եթէ Աստուած գոյութիւն ունեցած ըլլար ան մարդկութեան թշնամի պիտի ըլլար, թշնամի պիտի ըլլար նաեւ յառաջդիմութեան» եւլն<sup>67</sup> : Ի մեծ ընդվզում ներկաներուն եւ նամանաւանդ Արեւելքի Միութիւն օթեակի հայ «եղբայր»ներուն, ան շարունակեց ըսել, թէ ինք «Տիեզերքի ոչ մէկ Մեծ Ճարտարապետ կը ճանչնայ, այսինքն Աստուած, եւ կ'երդնու եւ կը խոստանայ մի միայն իր պատուին վրայ»<sup>68</sup> :

Ամիապլի այս բուռն ելոյթը, որ ազատ-որմնադրութեան կանոնագրին հիմը կ'ուրանար, խիստ ժխտական տպաւորութիւն գործեց հայ ժողովականներուն վրայ, որոնք որոշեցին բողոքագիր մը ուղարկել Ֆրանսայի Մեծ Արեւելքի կեդրոնին: Սոյն բողոքագիրը ստորագրուած է Յովսէփ Իսկենտէրի, Միւհենտիսեանի, Յարութիւն Նորատունկեանի, Գալուստ Էքիզեանի, Յարութիւն Սարաֆեանի, Ներսէս Տատեանի, Ն. Հակկիարի, Ստեփան Գարաքաշի եւ Եղիա Չայեանի կողմէ: Անոնք իրենց յղած նամակին մէջ յատկապէս կը շեշտէին, որ «օթեակ մը կանոնաւոր չի կրնար ճանչցուիլ առանց Աստուծոյ գոյութեան ճանաչումին»: Քանի մը շաբաթ յետոյ, Ազնաւուր եւս Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդին նոյնիմաստ նամակ մը ուղղելով, դիտել կու տար, թէ «Ազատ-որմնադրութեան Սահմանադրութեան 29րդ յօդուածը Աստուծոյ գոյութիւնը կը ճանչնայ եւ երբեք չի յօժարիր զայն ուրանալ»<sup>69</sup> : Մէր օթեակի հիմնադիր «եղբայր»ները, երբ տեսան, թէ Արեւելքի Միութիւն օթեակի դիւանը որեւէ զղջում չի յայտնել վերոյիշեալ յայտարարութիւններուն առնչութեամբ, Փարիզի կեդրոնէն խնդրեցին, որ պատիժ սահմանուի սոյն օթեակին դէմ, որ հակասահմանադրական արտայայտութիւններ ունեցած էր: Սակայն

չուտով համոզուեցան, որ Ֆրանսայի Մեծ Արեւելքը իր լուսթեամբ կը բաժնէր նոյն տեսակէտերը: Ազնաւուր՝ ի տես այս կացութեան, սպառնաց նախագահութենէ հրաժարիլ: Մինչ այդ՝ 22 Դեկտեմբեր 1866ին, երբ Մէր օթեակը՝ յետ արտօնութեան, բացման պաշտօնական արարողութիւնը կը կատարէր, հանդիսութեան ներկայ էին ոչ միայն այլ օթեակներու հայ կամ օտար անդամներ, այլ Պոլսոյ գրեթէ բոլոր օթեակներու Գերյարգելի Վարպետները անձամբ մասնակցելով պատուեցին Մէր օթեակի ծնունդը<sup>70</sup>: Ազնաւուր երբ տեսաւ թէ ազատորմնադիրներու հիմնական սկզբունքներու ջնջումի անպատեհութեան մասին Ֆրանսայի Մեծ Արեւելքի մօտ իր ուղարկած բողոքները որեւէ արձագանգ չգտան, 30 Յունուար 1867ին ընդհանուր քարտուղարին երկար նամակ մը գրեց, ուր ի միջի այլոց կը յիշեցնէր. «Պէտք է ձեզմէ ծածկեմ որ եթէ Աստուծոյ Գոյութիւնը եւ Հոգւոյ Անմահութիւնը ուրացուի, ու եթէ երբեք այս երկու սկզբունքները մեր Սահմանադրութենէն (constitution) ջնջուին, դուք պիտի կորսնցնէք ամբողջ Մէր օթեակը եւ բազմաթիւ եղբայրներ Union d'Orient օթեակէն - օթեակ որ Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ կը գործէ - եւ ձեր դէմ պիտի գտնէք - ինչպէս դուք գայն չէք անգիտանար - հին ազատորմնադրութեան (սկզբունքներուն հաւատարիմ - Ա.Պ.) բոլոր օտար իշխանութիւնները (obédiances)»<sup>71</sup>:

Վերոյիշեալ ազդարարութիւնները Ֆրանսայի Մեծ Արեւելքի ընդգրկած նոր, ազատամիտ ուղղութեան վրայ որեւէ ազդեցութիւն չըրին եւ Մէր օթեակը, որ դեռ նոր հիմնուած էր, իր յարաբերութիւնները թէեւ չիսկեց կեդրոնին հետ, բայց անոնք որոշ չրջան մը առաջին մի քանի տարիներու սերտ վիճակը չունեցան:

Մեծ Արեւելքի Մէր օթեակի վերաբերեալ դիւանները մեզի ցոյց կու տան, թէ 1867ի ընթացքին բազմաթիւ նոր ընծայումներ տեղի ունեցած են: Անոնցմէ յիշենք մանաւանդ հայ աւետարանական համայնքի ազգապետ Ղազարոս Տաւուտեան՝ 7 Փետրուարին, բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեան՝ 21 Մարտին եւ պալատական հայթայթիչ Սիմոն Պէյ Մաքսուտ՝ 24 Յունիսին<sup>72</sup>:

Պոլսոյ Մէր օթեակի ունեցած թղթակցութիւնները Մեծ Արեւելքին հետ դժբախտաբար անբաւարար են լուսաբանելու համար անոր գործունէութիւնները, որովհետեւ այդ դիւանները օրակարգերու օրինակներ չունին: Այսուհանդերձ, Մէր օթեակի կողմէ Փարիզ ուղարկուած տարեկան անուանացանկերը ցոյց կու տան Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ հիմնուած վերոյիշեալ օթեակին ընծայուած պոլսահայ ազատորմնադիրներու անունները, ինչպէս նաեւ անոնց ծննդավայրն ու թուականը, օթեակի ընծայումի թուականը եւ աստիճանը՝ աշկերտ, ընկեր, վարպետ եւլն.:

Յրանսական Մեծ Արեւելքի Մէր օթեակի դիւանները, որոնք լրիւ թղթատեցինք, կը թոյլատրեն մեզի հաստատել, թէ Մէր օթեակի վարչութիւնը տարեկան անուանացանկերը կանոնաւորապէս չէ ուղարկած: Ապա, ուրիշ պարագայ մը եւս գրաւեց մեր ուշադրութիւնը, որ թէեւ Մէր սկիզբը ունէր միայն հայ անդամներ, սակայն 1870ականներէն յետոյ կը հանդիպինք նաեւ մահմետական անուաններու: Ըստ այս ցանկերուն, որոնք 11 հատ են, հետեւեալ դասաւորումը կրնանք ընել.

22 Յունուար 1866ին՝	18 Հիմնադիր անդամներ
11 Մարտ 1868ին՝	64 անդամներ
13 Ապրիլ 1869ին՝	80 անդամներ
27 Օգոստոս 1875ին՝	55 անդամներ
10 Ապրիլ 1876ին՝	63 անդամներ
28 Մայիս 1877ին՝	65 անդամներ
30 Օգոստոս 1879ին՝	38 անդամներ
16 Մարտ 1881ին՝	33 անդամներ
5 Մայիս 1882ին՝	41 անդամներ
28 Օգոստոս 1886ին՝	49 անդամներ
3 Սեպտեմբեր 1887ին՝	59 անդամներ <sup>73</sup> :

Սոյն ցուցակները, ինչպէս նաեւ Պոլսոյ մէջ գործող բազմաթիւ օթեակներու ցուցակները, որոնք թղթատեցինք, մեզի կը թոյլատրեն եզրակացնելու, թէ Մէր օթեակը իր գրեթէ երեսուն տարուան գործունէութեան ընթացքին ունեցած է ընդամէնը 164 անդամներ, որոնց 158ը հայեր են, 5ը՝ թուրք, եւ մէկն ալ հնդիկ: Այս անդամներէն ոմանք երկար տարիներ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան մէյմէկ դրօշակակիրները ըլլալով, անձնուիրաբար ու հաւատարմօրէն ծառայած են անոր սկզբունքներու տարածումին, մինչ ուրիշներ կարճ ժամանակ յետոյ հեռացած են կամ անդամավճարը չեն վճարած, ուստի իրենց արձանագրութիւնը ջնջուած է: Անշուշտ կարելի չէ անպայման հաստատել, թէ 1870ի եւ 1874ի միջեւ բնաւ նոր անդամներ չեն դիմած, որոնք 1875ի ցանկին վրայ պիտի չերեւէին՝ եթէ մինչ այդ հրաժարած ըլլային: Նոյնը կարելի է ըսել 1883էն 1885 տարիներու համար:

Մէր օթեակը իր երեսուն տարուան գոյութեան ընթացքին ունեցած է հետեւեալ նախագահները.

Սերովբէ Ազնաւուր	1868ին՝ Հիմնադիր նախագահ
Պօղոս Գամայիկ	29 Դեկտեմբեր 1867ին ընտրուած
Սերովբէ Ազնաւուր	1869ին՝ կրկին
Տիգրան Եղստեփեան	4 Յունուար 1870ին ընտրուած

Յարութիւն Նորատունկեան  
Յարութիւն Մերեէմ-Գուլի

13 Փետրուար 1876ին ընտրուած  
16 Ապրիլ 1885ին ընտրուած:

Թէեւ Մէր օթեակի ատենագրութիւնները կամ օրակարգերը անկարելի եղաւ գտնել, բայց կարգ մը այլ դիւաններէ կամ թղթակցութիւններէ կարելի է եզրակացնել, որ Մէր օթեակի անդամները թրքահայ ժողովուրդի ապագային հանդէպ բնաւ անտարբեր չեն մնացած, մանաւանդ Հայկական Հարցի ծագումէն յետոյ: Գիտենք թէ Յարէթիկ Նէվրուզեան, 1878ի Սան Սթեֆանոյի ռուս-թրքական բանակցութիւններուն ընթացքին, իբրեւ թարգման ընկերացաւ Պոլսոյ Ներսէս Վարժապետեան (1874-84) Պատրիարքին, երբ ան Հայկական պահանջները ռուսական բանակի գլխաւոր հրամանատար Մեծ Դուքս Նիքոլայ Նիքոլաեւիչի ներկայացնելու համար Սան Սթեֆանո մեկնեցաւ:

Պոլսահայ համայնքը խորապէս տպաւորուած ձէյմզ Պրայսի (1838-1922) Անգլիոյ Աշխարհագրական Արքայական Ընկերութեան մէջ սարքուած երեկոյթի մը ընթացքին արտասանած ճառէն, ուր Լոնտոնի Հայասէր Անգլիացիներու խմբակի առաջնորդը՝ դեռ Սան Սթեֆանոյի դաշնագրի նախօրեակին, Արեւմտահայաստանի ինքնավարութեան ի նպաստ կ'արտայայտուէր, հաւաքական շնորհակալութեան նամակ մը կ'ուղարկէր անոր: 169 պոլսահայ ազգայիններու ստորագրութիւնները կրող այս գրութեան մէջ կը տեսնենք պատրիարքական փոխանորդ Յովհաննէս Քհնյ Մկրեանի եւ Գարեգին Վրդ Սրուանձտեանցի կարգին նաեւ ծանօթ ազատ-որմնադիրներու՝ Ազնաւուրի, Եուսուֆեանի, Մերեէմ-Գուլիի եւ Գարրիէլ Նորատունկեանի անունները: Այս վերջինը, որ Փարիզի օսմանեան դեսպանատան մէջ իբրեւ իրաւագիտական խորհրդական պաշտօնավարած ժամանակ Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ գտնուող Բարեգթութիւն-Բարեկամութիւն (La Clémentine-Amitié) օթեակին ընծայուած էր, Պոլիս վերադարձին անմիջապէս Մէր օթեակին յարած էր: Պրայսի ուղղուած այս նամակին մէջ անոնք միաժամանակ կը շեշտէին, թէ «հայ ժողովուրդին արժանի լուսաւոր ապագայի մը համար Հայաստանի ինքնավարութեան վարչածեւ մը միակ արմատական լուծումն է»<sup>74</sup>: Ազնաւուր՝ այս նամակէն քանի մը շաբաթ յետոյ՝ իր կողմէ անձնական նամակ մը եւս Պրայսի ուղարկելով, կը յայտնէր, թէ «հայ ժողովուրդը իր բարօրութեան եւ յառաջդիմութեան համար անգլիական հովանաւորութիւնը կը նախընտրէ»<sup>75</sup>:

1878ի Պերլինի դաշնագրէն յետոյ, երբ Պոլսոյ աւագանին եւ նամանաւանդ մտաւորական երիտասարդ սերունդը իրենց ուշադրութիւնը Արեւմտահայաստանի դաւառներուն վրայ կեդրոնացուցին՝ իրենց ազգակիցներուն Ֆիզիքապէս թէ բարոյապէս օժանդակելու համար,

Մէր օթեակը եւս մասնակցեցաւ այդ շարժումին: 1880ին Հայաստանի գաւառներու սովը յուզեց ամբողջ պոլսահայ համայնքը: Դէպի գաւառ նպաստ առաքելու նպատակով, Մէր օթեակի անդամներ Սովելոց Յանձնախումբին անունով հանդէսներ կազմակերպեցին եւ նոյնիսկ դիմեցին համայն աշխարհի «եղբայրական կազմակերպութիւններուն»: Ֆրանսայի Մեծ Արեւելքը դրապէս արձագանգեց Պոլսոյ Մէր օթեակի «եղբայր»ներու խնդրանքին, եւ Բարձրագոյն Խորհուրդը շտապեց 100 Փրանքի օգնութիւն մը ընել<sup>76</sup>, մինչ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նիւ Եորքի եւ Քալիֆորնիոյ Մեծ Օթեակները մերժեցին իրենց օժանդակութիւնը բերել Սովելոց Յանձնախումբին՝ պատրուակելով, թէ «յանձնախումբին մասոնական հանգամանքը իրենց համար բաւարար չափով չէր հաստատուած»<sup>77</sup>:

Ինչպէս ծանօթ է, 1890ականներու առաջին տարիներէն սկսեալ Հայկական Հարցը հետզհետէ յեղափոխական բնոյթ մը ստացաւ: Արտասահման հիմնուած գաղտնի կուսակցութիւններու անդամներ Արեւմտահայաստանի գաւառները սկսան թափանցել եւ ազգային շարժումը նոր ուղղութեան մը հետեւեցաւ: 1890ին Գումգափուի հայոց պատրիարքարանին առջեւ կազմակերպուած հնչակեան ցոյցը<sup>78</sup>, գաւառներու մէջ տեղի ունեցող խլրտումները, որոնք օսմանեան իշխանութիւններու կողմէ խստօրէն կը զսպուէին, բովանդակ հայ ժողովուրդը կասկածի տակ դրին, եւ հայկական հաւաքոյթները ոստիկանական իշխանութիւններու հսկողութեան ենթարկուեցան:

Սասունի սպանդին՝ 1894ի ամրան, շուրջ 8000 հայեր քրտական Համիտիէ հեծելազույգերու վայրագութիւններուն զոհ գացին: Այս ջարդերուն լուրերը՝ հակառակ Բ. Դրան առած գգուչութիւններուն, Սեպտեմբերէն սկսեալ արեւմտեան մամուլի էջերուն գլխաւոր նիւթը դարձան: Իբրեւ հետեւանք այս կացութեան, հայկական միութիւններու հաւաքոյթները արգիլուեցան: Մէր օթեակի անդամները եւս կը խուսափէին ժողովներու ներկայ ըլլալէ:

Հայկական Հարցի գարգացումը, իր բոլոր աննախատեսելի հետեւանքներով չյապաղեցաւ նաեւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի ուշադրութիւնը գրաւելէ: Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդի անդամ Ամիապլ, 17 Սեպտեմբեր 1894ին, Պոլսոյ մէջ Մէր օթեակի վարչութեան քանի մը պատասխանատուներու հետ ժողով մը գումարեց, ուր որոշուեցաւ այլեւս վերջ տալ օթեակի գործունէութեան: Ամիապլի տեղեկագիրը, որ 28 Հոկտեմբեր թուականը կը կրէ, հետեւեալ կերպով կը նկարագրէ Մէր օթեակի կացութիւնը. «Աւելի քան երեք տարիներէ ի վեր, Պոլսոյ հայ համայնքին մէջ խռովութիւններ կը պատահին, որոնք մինչեւ իսկ արիւնոտ ընդհարումներու տեղի կու տան: Այդ ժամանակէն ի վեր, այս համայնքը շատ դէշ աչքով կը դիտուի օսմանեան

իշխանութիւններուն կողմէ: Իրենց անդամներուն բացարձակապէս արգիլուած է հաւաքոյթներ կազմակերպել:

«Սէր օթեակը, բաղկացած ամբողջովին հայ անդամներէ, ուրեմն այդ ժամանակէն ի վեր, ստիպողաբար եւ բացարձակապէս դադրած է գործելէ:

«1865ին, սխալ մը եղաւ այսպիսի օթեակի մը հիմնումը, որ իր աշխատութիւնները հայերէն լեզուով պիտի կատարէր, լեզու մը, որ նոյնիսկ հայ ցեղին բոլոր անդամներուն կողմէ չի խօսուիր:

«Կը համարեմ թէ Սէր օթեակի վերապրումը փափաքելի չէ»<sup>79</sup>:

Սէր օթեակի Գերյարգելի Վարպետ Մերեէմ-Գուլի, Պոլսէն ուղարկուած 3 Յուլիս 1895 թուակիր նամակով մը Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդին կ'իմացնէր, թէ «բացառիկ պարագաներու բերմամբ Սէր օթեակը չկարենալով իր գործունէութիւնը շարունակել պարտաւորուած է «քունի մէջ մտնել»<sup>80</sup>: Առժամաբար նկատուած այս պարագան՝ յաջորդող քաղաքական ծանրակշիռ դէպքերու պատճառաւ, վերջնական հանգամանք մը առաւ, ու հայկական օթեակը 1898ին վերջնականապէս փակուեցաւ:

Հայկական Հարցի ծանրակշիռ իրադարձութիւններուն հետեւանքով է, որ պոլսահայ խումբ մը արեւմտամէտ եւ յառաջդիմական նկատուող ազգայիններու կողմէ, շուրջ երեք տասնեակ տարիներ առաջ մեծ յոյսերով եւ ակնկալութիւններով հիմնուած օսմանեան մայրաքաղաքի առաջին օթեակի ողիսականը այսպիսով վերջ կը գտնէր: Օթեակի փակումէն յետոյ, անդամներէն ոմանք յարեցան ուրիշ օթեակներու եւ ազատ-որմնադիրներու սկզբունքներուն հաւատարիմ մնալով շարունակեցին նոյն ուղին, մինչ ուրիշներ բոլորովին հեռացան մասոնական շարժումէն:

\* \* \*

Ինչպէս նախապէս արդէն անդրադարձանք, օտարահպատակ ազատ-որմնադիրներու կողմէ հիմնուած օթեակները՝ օտար տէրութիւններու երկար տարիներէ ի վեր ունեցած առաձնաշնորհումներուն շնորհիւ, իրենց դեսպանատուներու բարոյական պաշտպանութիւնը կը վայելէին, եւ այս իսկ պատճառաւ օսմանեան իշխանութիւններու հսկողութիւնէն յարաբերաբար զերծ կը մնային: Այս պարագան բացառիկ առիթ մը կ'ընծայէր Պոլսոյ եւ նամանաւանդ Սելանիկի մէջ Իտալիոյ Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ հիմնուած օթեակներուն, որպէսզի անոնք օսմանեան սուլթանին ընդդիմադիր երիտթուրք շարժումի անդամներու զաղտնի ժողովներուն իբրեւ վստահելի

մէյմէկ թաքստոց ծառայեն, ինչպէս աւելի ուշ դիտել կու տար երեւելի երիտթուրք մը<sup>81</sup>: Մասնաւորաբար սելանիկցի հրեայ փաստաբան էմմանուէլ Քարասոյի նախաձեռնութեամբ հիմնուած *Բարձր Մակեդոնիա* (Macedonia Risorta) օթեակը, որ երիտթուրքերու 24 Յուլիս 1908ի յեղափոխութեան կազմակերպումին մէջ խիստ կարեւոր դեր մը խաղաց, որպէս իր առաջին անդամներէն ունեցաւ 1915ի հայկական ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատու, «եղբայր» Թալէաթը:

Երբ 1908ի յեղափոխութեան յաջորդեց Միտհաթ Փաշայի 1876ի սահմանադրութեան վերահաստատումը, եւ օսմանահպատակ բոլոր ժողովուրդներուն միջեւ համերաշխութեան ու հաւասարութեան նոր շրջան մը սկսաւ, ազատ-որմնադրութիւնն ալ նոր թափ մը ստացաւ: 1 Օգոստոս 1909ին հիմնուեցաւ Թուրքիոյ *Մեծ Արեւելքը* (Մաշրքը-ը Ազամ), որուն առաջին նախագահ ընտրուեցաւ Գերյարգելի Վարպետ Թալէաթ: Աւելորդ չ'ըլլար հոս յիշել, որ Հոկտեմբեր 1909ին Բարձրագոյն Խորհուրդի 33 աստիճան կրող 14 անդամներէ բաղկացած նորակազմ վարչութեան մէջ կը գտնենք 7 թուրք եւ 6 հրեայ, ինչպէս նաեւ նոյն աստիճանն ունեցող հայ «եղբայր» մը՝ Միքայէլ Նորատունկեան<sup>82</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Թալէաթ եւ իր մօտիկ գործակիցները՝ «եղբայր»ներ Միտհաթ Շիւքրիւ, Ճաւիտ, Իսմայիլ Ճամպոլաթ, Ռահմի, Քարասօ եւ ուրիշներ, իրենց նենգ ծրագիրները իրականացնելու համար ոտնակոխ ըրին ազատ-որմնադրութեան սկզբունքները, ու Փոքր Ասիոյ բովանդակ հայ ժողովուրդը տարագրութեան ենթարկելով անոնց ստացուածքը կողոպտեցին եւ Օսմանեան կայսրութեան մահմետական հպատակներուն միջեւ բաժնեցին: Հայ ազատ-որմնադիրներէն ոմանք իրենց կեանքին գնով վճարեցին երիտթուրք ոճրագործ խմբակի հանդէպ իրենց ունեցած վստահութեան գինը, մինչ ուրիշներ՝ անգօր հանդիսատեսները եղան իրենց ժողովուրդի բնաջնջումին եւ դարաւոր հայրենիքի կործանումին:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Մէր օթեակի մասին հայերէնով յոյս տեսած գլխաւոր աշխատութիւններն են՝ Ալրսե-նակ] Ֆլէնէրճեան], «Ազատ-Որմնադրութիւնը Մօտաւոր Արեւելքի Հայութեան Մէջ», *Կեանք Եւ Արուեստ*, Ծ. տարի, 1935, էջ 73-81. Ռուրէն Բերբերեան, «Հայ Մասօնները Եւ «Մէր» Օթեակը Պոլսոյ Մէջ», *Հայրենիք*, Մարտ-Յունիս 1937. Ա. Ֆլէնէրճեան, «Ազատ Որմնադրութիւնը Հայոց Մէջ», *Հայրենիք*, Հոկտեմբեր 1954-Դեկտեմբեր 1955. Բ. Ճ. Սիրունի, *Պոլիս Եւ Իր Դերը*, Երբորդ հատոր, Անթիլիաս, Տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն կիլիկիոյ, 1987, էջ 197-217. Սիրու-նի օգտուած է նախորդ յօդուածներէն:

<sup>2</sup> Ազատ-որմնադրութեան սահմանադրութիւնը տե՛ս՝ *Le Monde Maçonnique* (Paris), XVIe année, Mai 1874, էջ 25-26, Ազատ-որմնադրութեան սահմանադրութիւնը

Հայերէն՝ Մահմանադրութիւն Որմնադրական Ուխտին խորագրով, լոյս տեսաւ Փարիզ, 1875ին՝ Մասիսի խմբագրապետ Կարապետ Իւթիւճեանի կողմէ՝ յետ Ծրանապի Մեծ Արեւելքօթեակի արտօնութեան Իտալիոյ Մեծ Արեւելքի ենթակայ Եղիպտոսի Հայկական Արարատ օթեակի «եղբայր»ները զայն ցանկացած էին ունենայ 1868ին. տե՛ս՝ Bibliothèque Nationale (այսուհետեւ՝ B.N.), Փարիզ, FM<sup>2</sup> 866:

<sup>3</sup>The *Freemason's Chronicle*, no. 858, 20 June 1891, էջ 395:

<sup>4</sup>The *Freemason's Chronicle*, no. 2454, 21 January 1922, էջ 47:

<sup>5</sup>Ibid., no. 2453, 14 January 1922, էջ 23:

<sup>6</sup>Gould's *Freemasonry History*, 3rd ed., vol. IV, London, 1951, էջ 311:

<sup>7</sup>Ազատ-որմնադիրներու օթեակներու ժողովներուն կամ հաւաքովիներուն ոչ-անդամ մը արտօնուած էջ ներկայ ըլլալու, բայց ուրիշ օթեակէ անդամ մը կրնայ արտօնութեամբ ներկայ ըլլալ:

<sup>8</sup>P. Antoine Rabbath, *Documents inédits concernant l'histoire du christianisme en Orient (XVI-XIX s.)*, vol. I, Paris 1905, էջ 13. տե՛ս նաեւ՝ Հ. Պէրպէրեան, «Առաջին Ազատ-Որմնադիրները Պոլսոյ Եւ Զմիւռնիոյ Մէջ», *Կեանք Եւ Արուեստ*, Ծրդ տարի, Թիւ 2, Փետրուար 1936, էջ 41-43:

<sup>9</sup>Jean Humbert, 'Une loge maçonnique à Constantinople en 1748 d'après des documents inédits', *Affaires étrangères*, Octobre 1932, էջ 570:

<sup>10</sup>Նոյն, էջ 572:

<sup>11</sup>Նոյն:

<sup>12</sup>Humbert, էջ 570. Պէրպէրեան, էջ 41:

<sup>13</sup>Humbert, էջ 572:

<sup>14</sup>B.N., FM<sup>2</sup> 589:

<sup>15</sup>*Papers Relating to the Condition of Christians in Turkey*, London: H.M.S.O., 1860, էջ 36:

<sup>16</sup>4 Մայիս 1855 թուակիր օրէնքով ոչ-խալամներու զինուորական տուրքը ջնջուեցաւ եւ անոնց ալ զինուորագրութիւնը լայտարարուեցաւ, տե՛ս՝ Ufuk Gülsoy, *Osmanlı gayrimüslimlerinin askerlik serüveni* [Օսմանցի Ոչ-Մահմետականներուն Զինուորական Արկածախնդրութիւնը], Istanbul, 2000, էջ 58:

<sup>17</sup>Հաթիթ-ը Հիւժայիւնի լրիւ բովանդակութեան համար տե՛ս՝ *Eastern Papers: Correspondence Respecting Christian Privileges in Turkey*, Part XVIII, London, 1856, էջ 63-66:

<sup>18</sup>Թուրք պատմարան Ապտիւրրահման Եէրէֆ Պէյի Հաթիթ-ը Հիւժայիւնի լայտարարութեան վաղորդային Պոլսոյ մահմետականներու վրայ դործած ազդեցութիւնը նկարագրող գրութիւնը խիստ հետաքրքրական է, երբ ան կը դրէ թէ ոստիկանապետ մը մահմետականի մը կ'ըսէ. «Տղաս, այլեւս կեաւուրին կեաւուր պիտի չըտես. հիմա Թանգիւմաթ կայ», տե՛ս՝ Abdürrahman Şeref Bey, *Tarih Müsahebeleri* [Պատմութեան Եւրջ Զրոյցներ], Istanbul, 1339 (1923), էջ 73:

<sup>19</sup>Arthur Beylerian, 'Les Origines de la question arménienne du Traité de San Stefano au Congrès de Berlin (1878)', *Revue d'histoire diplomatique*, nos. 1-2, 1973, էջ 148:

<sup>20</sup>Մաղաքիս Արքեպիսկոպոս Օրմանեան, *Ազգապատում*, մասն երրորդ, Երուսաղէմ, Տպարան Մրրոց Յակոբեանց, 1927, սիւնակ 3808-3809:

<sup>21</sup>Սիրունի, էջ 68:

<sup>22</sup>Օտեանի եւ իր ժամանակից ազգային ղեմքերու Ազգային Մահմանադրութեան պատրաստութեան համար կատարած դործունէութեան համար տե՛ս՝ Սիրունի, էջ 152: Տե՛ս նաեւ՝ Arthur Beylerian, 'Krikor Odian (1834-1887): un haut fonctionnaire

<sup>41</sup>Beylerian, 'Krikor Odian', էջ 45-55;

<sup>42</sup>Գրիգոր Հ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ Եւ Հերոս Չէյթուլ, Նիւ Եորք, Հրատարակութիւն Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդր. Վարչութեան, 1934, էջ 135-141. Հ. Մ. Պօղոսեան, Չէյթուլի Պատմութիւնը 1409-1921 թթ., Երեւան, «Հայաստան», 1969, էջ 163-183;

<sup>43</sup>Արդարեւ, վերջերս յոյս տեսած ուսումնասիրութեան մը մէջ կը տեսնենք թէ Յունաստանի անկախութեան պայքարը որքան համակրանքով դիմաւորուած էր Յրանսայի ազատ-որմնադիրներու շրջանակներուն մէջ. տե՛ս՝ Les Francs-maçons français au secours de la Grèce insurgée (1821-1829), Athènes, 1976, էջ 5.

<sup>44</sup>Dumont, էջ 178.

<sup>45</sup>B.N., FM<sup>2</sup> 866, Արեւելքի Միութիւն օթեակի թղթածրար (1862-1868).

<sup>46</sup>Նոյն.

<sup>47</sup>Արեւելքի Միութիւն օթեակի հայ անդամներէն յիշենք Ժ.Թ. դարու երեւելի դէմքերէն ոմանք, որոնք յետոյ անմիջապէս Սէր օթեակին միացան.՝ Տոքթ. Գրիգոր Մոզեան, Ներսէս Տատեան, Տոքթ. Ստեփան Փաշա Ասլանեան, Յովսէփ Իսկենտէր, Տոքթ. Միքայէլ Խորասանճի, Տոքթ. Նահապետ Թուսինեան, Սեպուհ Պէյ Մաքսուտ, Տիգրան Պէյ Ալիքասանեան, Տոքթ. Յովսէփ Շիշմանեան, Յովհաննէս Նուրեան եւ ընդ.

<sup>48</sup>Ազնաւուրի անձնական նամակը լրիւ կը մէջբերենք որովհետեւ կը փաստէ թէ ան որքան Անդլոյ մեծ դեսպանին մօտ վարկ ունէր.

<sup>49</sup>Ազգային Սահմանադրութիւնը ի զօրու պիտի մնայ մինչեւ 11 Օգոստոս 1916, երբ երկաթուղիներու կառավարութիւնը Փոքր Ախոյ բովանդակ հայ ժողովուրդը տեղահան ընելէ յետոյ ալիւս անոր դործադրութիւնը աւելորդ նկատելով զանիկա ջնջեց, պատրիարքարանն ալ՝ առաջնորդարանի վերածելով.

<sup>50</sup>B.N., FM<sup>2</sup> 866, Արեւելքի Միութիւն օթեակի թղթածրար (1862-1868).

<sup>51</sup>Տե՛ս Անդլոյ մեծ Օթեակի դիւաններ, Տիգրան օթեակի անդամներու ցուցակ. նաեւ՝ Ֆէնէրճեան, «Ազատ Որմնադրութիւնը Հայոց Մէջ», Հայրենիք, Փետրուար 1955, էջ 83.

<sup>52</sup>Տե՛ս Տապլինի (Իրլանտա) մեծ Օթեակի դիւաններ, թիւ 366 օթեակի թղթածրար.

<sup>53</sup>B.N., FM<sup>2</sup> 866, Ազնաւուր 30 Յունուար 1867 թուակիր նամակով մը կ'իմացնէ թէ մայրը մեռած է, եւ տղան՝ Անթուանն ալ, որ զանազան օթեակներու անդամ էր, եւս մահացած է.

<sup>54</sup>Նոյն.

<sup>55</sup>Dumont, էջ 183.

<sup>56</sup>Բերբերեան, Մարտ 1937, էջ 82.

<sup>57</sup>Նոյն, էջ 83.

<sup>58</sup>B.N., FM<sup>2</sup> 866, Ազնաւուրի 26 Փետրուար 1866 թուակիր նամակը.

<sup>59</sup>B.N., FM<sup>2</sup> 866, Սէր օթեակի թղթածրար.

<sup>60</sup>Նոյն.

<sup>61</sup>B.N., FM<sup>2</sup> 866, Ազնաւուրի Պոլիսէն 28 Փետրուար 1866 թուակիր նամակը Յրանսայի մեծ Արեւելքին.

<sup>62</sup>Նոյն.

<sup>63</sup>Տե՛ս՝ Եաւելուած Ա.

<sup>64</sup>Բերբերեան, Մարտ 1937, էջ 83. տե՛ս նաեւ՝ Սիրունի, էջ 200.

- <sup>65</sup> Այս նամակը ստորագրած են Յովսէփ Իսկենտէր իբրև Ա. Հակոբ, Տոբթ. Բարունակ Ֆէրուխան՝ Բ. Հակոբ, Պօղոս Գամալիկ՝ Ա. մասնադէտ և Տիրան Պէյ Ալիքանեան՝ դանձապետ:
- <sup>66</sup> B.N., FM<sup>2</sup> 866, Մեծ Արևելքի 7 Մայիս 1866 թուակիր պատասխանը:
- <sup>67</sup> B.N., FM<sup>2</sup> 866, Արևելքի Մյուսթին օթեակի թղթածրար:
- <sup>68</sup> Եռյն:
- <sup>69</sup> B.N., FM<sup>2</sup> 866, Ազնաուրի 3 Յուլիս 1866 թուակիր նամակը:
- <sup>70</sup> Միայն Արևելքի Մյուսթին օթեակը ներկայ չեղաւ Մէր օթեակի բացումի պաշտօնական արարողութեան. տե՛ս՝ B.N., FM<sup>2</sup> 866, Մէր օթեակի կողմէ Պոլսէն Ֆրանսայի Մեծ Արևելքին ղրկուած 4/16 Յունուար 1867 թուակիր նամակը, որ ստորագրած են Ազնաուր, Իսկենտէր, Գամալիկ, ճառարիս Տոբթ. Թափաչէիան և քարաուղար Տիգրան Յուսուֆեան:
- <sup>71</sup> B.N., FM<sup>2</sup> 866, Մէր օթեակի թղթակցութեան թղթածրար:
- <sup>72</sup> B.N., FM<sup>2</sup> 866, Մէր օթեակի 25 Մարտ 1868 ի ցուցակը:
- <sup>73</sup> 1887 ի ցուցակը կու տանք լրիւ. տե՛ս՝ Յաւելուած Բ.:
- <sup>74</sup> Bodleian Library (Oxford), MS. Bryce 191, Constantinople, 6 April 1878:
- <sup>75</sup> Idem., Constantinople, 29 April 1878:
- <sup>76</sup> B.N., Rés. FM<sup>2</sup> 157:
- <sup>77</sup> Եռյն:
- <sup>78</sup> Arthur Beylerian, 'L'Impérialisme et le mouvement national arménien (1885-1890)', *Relations Internationales*, no. 3, 1975, էջ 43:
- <sup>79</sup> B.N., Rés. FM<sup>2</sup> 157, Louis Amiable au Conseil de l'Ordre, Aix, 26 Octobre 1894:
- <sup>80</sup> B.N., Rés. FM<sup>2</sup> 157, Mériem-Kouly au Grande Orient de France, Constantinople, 3 Juillet 1895:
- <sup>81</sup> Angelo Iacovella, *Gönye ve Hilâl: İttihad-Terakki ve Mansonluk* [Անկյունաչափ և Մահիկ. Իթիթիւաա-Թերաքքին և Մասոնութիւնը], Istanbul, 1968, էջ 43:
- <sup>82</sup> Թուրքիոյ Մեծ Արևելքի հիմնումին մասին տե՛ս մանաւանդ՝ 'Grande Oriente Ottomano', *Rivista Massonica*, vol. XL, nos. 7-8 (1969), էջ 191:

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Նախապես ո՞ր անդամ էր
13	Հէքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-9-1831	հաշուակալ- բաւերագիր	վարպետ	“Oriental”
14	Աղջիկեան	Գօզնա	Խոսրովա	24-10-1817	անետրական	քնկեր	“Integrity”
15	Իսիմեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	աշկերտ	“Union d’Orient”
16	Ալիքսանեան	Տիրան Պէլ	Կ. Պոլիս	Յոնուար 1814	Ելինտական Խորհուրդի անդամ	վարպետ	“Union d’Orient”
17	Շիրանեան	Վէնսան	Կ. Պոլիս	27-5-1826	անետրական	վարպետ	“Union d’Orient”
18	Ազնաուր	Անթուան	Կ. Պոլիս	Մարտ 1844	հաշուակալ	վարպետ	“Union d’Orient”

### ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ.

#### «Սէր» Օրեակի 1886-87 Տարուան Անդամացանկը

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր բուսականին
1	Իսիմեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	3°	1865 հիմն.
2	Նորատունկեան	Յարութիւն	Կ. Պոլիս	20-10-1845	անետրական	18°	1865 հիմն.
3	Պուկլուրեան	Ռուբէն	Կ. Պոլիս	11-03-1836	լրատագետ	3°	23-08-1866
4	Հէքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-09-1831	գործակալ		18-10-1866
5	Պէշիլեան	Մելքոն	Կ. Պոլիս	14-05-1840	ժամագործ		18-10-1866
6	Եոստֆեան	Տիգրան	Կ. Պոլիս	08-11-1836	դատաւոր	18°	18-10-1866
7	Հովեան	Ղազարոս	Կ. Պոլիս	21-06-1833	ուկերիչ		07-02-1867

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Նախապես ուր անդամ էր
13	Հեքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-9-1831	հաշուակալ- բառերագիր	վարպետ	“Oriental”
14	Աղջիկեան	Գօզնա	Խոսրովա	24-10-1817	առևտրական	բնկեր	“Integrity”
15	Իսիճեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	աշկերտ	“Union d’Orient”
16	Ալիքսանեան	Տիրան Պէյ	Կ. Պոլիս	Յունուար 1814	Եղեմտական Խորհուրդի անդամ	վարպետ	“Union d’Orient”
17	Շիրաճեան	Վենսան	Կ. Պոլիս	27-5-1826	առևտրական	վարպետ	“Union d’Orient”
18	Ազնուոր	Անբուան	Կ. Պոլիս	Մարտ 1844	հաշուակալ	վարպետ	“Union d’Orient”

### ՅԱՒԵԼՈՒԹԱՏ Բ.

#### «Սէր» Օրեակի 1886-87 Տարուան Անդամացանկը

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր բուսականին
1	Իսիճեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	3°	1865 հիմն.
2	Նորատունկեան	Յարութիւն	Կ. Պոլիս	20-10-1845	առևտրական	18°	1865 հիմն.
3	Պուլկուրեան	Ռուբէն	Կ. Պոլիս	11-03-1836	լրատագետ	3°	23-08-1866
4	Հեքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-09-1831	գործակալ		18-10-1866
5	Պէշիրեան	Մելքոն	Կ. Պոլիս	14-05-1840	ժամագործ		18-10-1866
6	Նուսուֆեան	Տիգրան	Կ. Պոլիս	08-11-1836	դատաւոր	18°	18-10-1866
7	Հովեան	Ղազարոս	Կ. Պոլիս	21-06-1833	ոսկերիչ		07-02-1867

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր բուականին
8	Պոլաճեան	Յովիաննէս	Կ. Պոլիս	10-03-1831	չունի	3°	07-02-1867
9	Շախինեան	Յովիաննէս	Կ. Պոլիս	11-03-1842	հաշուակալ		25-09-1867
10	Աբանասեան	Համբարձում	Կ. Պոլիս	18-07-1840	գործակալ	3°	04-03-1869
11	Կիլպէնկեան	Կիլպէնկ	Կեսարիա	01-03-1834	առեսարական	3°	17-09-1869
12	Պէրպէրեան	Գրիգոր	Կեսարիա	14-04-1841	դրամատր	3°	04-05-1871
13	Տէրունեան	Կարապետ	Էտիրնէ	23-08-1843	լումայափոխ	2°	18-05-1871
14	Անդրեանեան	Մարտիրոս	Բինկեան	1844	վաճառական	1°	18-05-1871
15	Մարտեան	Մարգիս	Չմիւռնիս	25-06-1837	վաճառական	3°	13-02-1872
16	Գարախանեան	Սեպոսի	Կ. Պոլիս	05-04-1846	վաճառական	1°	13-02-1872
17	Յովակիմեան	Յովակիմ	Կ. Պոլիս	06-02-1847	վաճառական	3°	29-02-1872
18	Յովակիմեան	Միքրան	Կ. Պոլիս	02-12-1844	վաճառական	3°	29-03-1872
19	Տէր Միքայէլեան	Միմաս	Արարկիր	1844	վաճառական	3°	18-09-1873
20	Չօպանեան	Միքրան	Կ. Պոլիս	09-03-1842	ուկեթիչ	18°	13-11-1873
21	Մագպուլեան	Համբարձում	Կ. Պոլիս	02-04-1833	դրամատր	3°	01-02-1874
22	Մերոսեան	Սիմոն	Կ. Պոլիս	05-03-1851	բժիշկ	1°	16-07-1874
23	Միքայէլեան	Կարապետ	Արարկիր	01-01-1845	դրամատր	3°	16-07-1874
24	Գագազեան	Յակոբ	Կեսարիա	24-07-1849	դրամատր	2°	16-07-1874
25	Եզզմանճեան	Կարապետ	Կ. Պոլիս	05-06-1845	վաճառական	3°	06-08-1874
26	Մելիքեան	Գարեգին	Կ. Պոլիս	12-12-1844	խրատագէտ	3°	06-08-1874
27	Թիւրապեան	Մեսոսի	Կ. Պոլիս	10-09-1843	վաճառական	3°	19-11-1874
28	Պէրպէրեան	Պօղոս	Կ. Պոլիս	04-10-1847	պանդրկապետ	1°	19-11-1874
29	Սըրմանեան	Մովսէս	Աֆիոն	20-09-1851	վաճառական	2°	30-10-1875

Գարախանեան

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր քուականին
30	Մերեւ-Գուլի	Յարութին	Կ. Պոլիս	15-01-1840	Օսման. Հնրհ. Գործակալութեան տնօրէն	18°	19-11-1876
31	Յովասապեան	Կարապետ	Կ. Պոլիս	08-05-1839	վաճառական	1°	18-03-1877
32	Ապանեան	Յարութին	Թրքատ	12-08-1851	ծով. ընկ. արկղակալ	3°	30-03-1879
33	Թաշճեան	Միսաք	Կեսարիա	25-03-1856	դրամատէր	3°	30-03-1879
34	Նիկողեան	Մանուկ	Գարահիսար	05-08-1845	վաճառական	1°	19-02-1880
35	Նշկեան	Յակոբ	Էրզրում	22-09-1853	չունի	1°	19-02-1880
36	Պարոնեան	Նիկողոս	Պրուսա	24-07-1850	պաշտօնեայ	3°	19-02-1880
37	Էնքսրճեան	Պօղոս	Կ. Պոլիս	04-04-1847	դրամատէր	3°	20-05-1880
38	Քէրէսթեճեան	Յովհաննէս	Կ. Պոլիս	14-03-1840	պաշտօնեայ	3°	20-05-1880
39	Բօրան	Միքայէլ	Կ. Պոլիս	16-09-1855	պաշտօնեայ	1°	20-05-1880
40	Պօլաճեան	Նշան	Կ. Պոլիս	04-02-1850	խրատագէտ	3°	20-05-1880
41	Թորամանեան	Մանուկ	Գարահիսար	10-03-1849	հացագործ	3°	20-01-1881
42	Ալէաթճեան	Գառնիկ	Կ. Պոլիս	18-05-1840	պանդոկապետ	3°	20-01-1881
43	Գազագեան	Յովհաննէս	Կեսարիա	12-04-1830	միջնորդ	1°	03-02-1881
44	Տէրունեան	Յակոբ	Էտիքնէ	08-09-1832	առետրական	3°	05-05-1881
45	Սիւլեան	Աւետիս	Ատանա	1853	քարզման	1°	23-08-1881
46	Տէր Ներսէսեան	Միքրան	Էրզրում	Յունիս 1855	չունի	3°	07-07-1882
47	Պէլլիկճեան	Մարգար	Կ. Պոլիս	16-06-1857	չունի	1°	07-07-1882
48	Ճէլալի	Յակոբ	Կ. Պոլիս	1855	Պարտոց Վարչ. պաշտօնեայ	3°	07-07-1882
49	Երկանեան	Գառնիկ	Կ. Պոլիս	29-09-1850	վաճառական	3°	07-07-1882
50	Կարապետեան	Ազարիկ	Կէլվէ (Իզմիր)	17-04-1843	վաճառական	1°	08-02-1883
51	Ճիլանեան	Տիգրան	Կ. Պոլիս	10-07-1851	ոսկերիչ	2°	13-02-1883

Թի	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ուրբուսականին
52	Բապուճեան	Կարապետ	Կ. Պոլիս	1852	առեարական	3°	23-01-1884
53	Զրիսեան	Ճանիկ	Կ. Պոլիս	21-08-1853	բժիշկ	3°	13-03-1884
54	Նախնիքեան	Անտոն	Գարահիսար	17-01-1857	վաճառական	3°	17-06-1885
55	Յովասարիեան	Արշակ	Էրզրում	22-07-1852	վաճառական	2°	25-09-1885
56	Պեղամեան	Յովսէփ	Կ. Պոլիս	1844	պաշտօնեայ	1°	13-12-1885
57	Փափազեան	Լեւոն	Կ. Պոլիս	01-03-1860	դրամատան փոխ-տնօրէն	1°	26-05-1886
58	Մինասեան	Ալիքսան	Սիլիստրէ	1857	վաճառական	1°	22-07-1886
59	Թօրաբեան	Մկրտիչ	Կ. Պոլիս	1863	ճաշարանապետ	1°	23-01-1887

THE INTRODUCTION OF FREEMASONRY IN THE OTTOMAN EMPIRE IN THE NINETEENTH CENTURY  
AND THE ARMENIAN SER LODGE IN CONSTANTINOPLE  
(Summary)

ARTHUR BEYLERIAN

The article studies the first attempts to establish freemasonic lodges in the Ottoman Empire starting from the second quarter of the 18th century and more intensively after the end of the Crimean War in 1856. This period coincided with official promises of radical reform within the empire, including Christian-Muslim equality. Various lodges established during this period were supported by West European diplomatic missions. Prominent Muslim and non-Muslim individuals (including Armenians) in the capital and other important Ottoman cities joined these lodges. The article then concentrates on the activities of Serovpe Aznavour, a dedicated Armenian freemason, who first joined a number of non-Armenian lodges in Constantinople and then established the *Haik* branch of the international Odd Fellows union (1862) and the *Ser* freemasonic lodge (1866), both of which were primarily for Armenian members. The activities of the *Ser* lodge, until its formal closure in 1898, are analyzed in detail. The article also provides useful information regarding the Armenian *Dekran* Lodge established in Smyrna (1864). The freemasonic movement in the Ottoman Empire, including the activities of the *Ser* lodge, was greeted with suspicion and even outright hostility by some quarters in the empire's elite, including the leaders of many Christian churches. The article also sheds light on many details in this regard.